

Անձնագիր տրամադրելու հարցով պաշտոնական պատասխան եմ ստացել, ասում են, որ կա ծանրաբեռնվածության խնդիր, ինչը հանգեցրել է նրան, որ որոշակի ժամանակահատվածով պրոցեսները հետաձգվում են: Այժմ ավելի երկար է տեւում պրոցեսը՝ չորսուկես ամիս, ինչը դարձել է նման խոսակցությունների եւ մտավախությունների պատճառ:

Կարդացեք՝ էջ 4

Ինչպես ցանկացած թուլացած եւ մեռնող կայսրություն, ԱՄՆ-ի՝ որպես կայսրության մահը եւս ուղեկցվելու է թունավոր արտանետումներով: Իր ունեցած ողջ ռազմական ներուժն օգտագործելու է որպես վերջին լծակ՝ աշխարհի երկրներին վախեցնելու, շանտաժի ենթարկելու եւ նրանց հաշվին իր գոյությունը էլի երկարաձգելու համար:

Կարդացեք՝ էջ 5

Ում պարզ չէ, որ Նիկոլի ընտրվելու դեպքում ամենօրյա կորուստները շարունակվելու են՝ հող, արժանապատվություն, սահմանադրություն, անգամ՝ պետականություն, նաեւ ավելի ռեալ է դառնալու պատերազմի վտանգը: Պատերազմից չեն վախենում, պատերազմին պատրաստվում են, իսկ Փաշինյանը չի պատրաստվում պատերազմին պատրաստվել:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 46 (4181), 25 մարտ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Խորհրդարանը երեկ քննարկեց ՔՊ-ական այլեւս նախկին պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի թեկնածությունը՝ Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնում, եւ, ըստ ամենայնի, իշխող մեծամասնությունն այսօր կքվեարկի Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելուց հետո թափուր մնացած տեղը զբաղեցնելու հարցը: Այն իշխանությունը, որը ժամանակին պայքարում էր Հրայր Թովմասյանի դեմ, թե իր ներկայացուցչին ՀՀԿ-ն ՍԴ դատավոր է նշանակել, հիմա կարկառուն ՔԿ-ականին գործուղում է ՍԴ: Որոշ տեղեկություններով՝ իշխանությունը Վարդանյանին դիտարկում է նաեւ ՍԴ նախագահի պաշտոնում, չնայած Վարդանյանի ու ներկայիս նախագահ Արման Դիլանյանի միջեւ քավորսանիկական կապին: Գագիկ Հարությունյանին անձնուրաց ծառայած, Հրայր Թովմասյանի հետ երկար տարիներ ընկերություն արած Վարդանյանն այդ առումով «պրոբլեմ չունի»՝ պատրաստ է անձնուրաց ծառայել բոլոր իշխանություններին: Արդյո՞ք նախկին ՔՊ-ական Վարդանյանը կկարողանա ՍԴ անաչառ դատավոր լինել. երեկ իրեն ուղղված այս հարցին Վարդանյանը մի ծիծաղելի պատասխան տվեց: Նախ ասաց, որ ցավ է ապրում Թովմասյանի համար, ապա՝ թե իր եւ նրա նմանությունը միայն այն է, որ երկուսն էլ, այո, կուսակցական են: Նշեց, որ նաեւ ԱԺ պետահիրավականի նախագահի պաշտոնից են գնում ՍԴ, բայց Հրայր Թովմասյանի հարցը խնդրահարույց էր նրանով, որ նա ոչ թե իր գրած Սահմանադրության հոդվածով էր ընտրվել ՍԴ դատավոր ու նախագահ, այլ՝ նախորդ Սահմանադրության, որ երկար պաշտոնավարի:

Ըստ տեղեկությունների, «Արթիկ» ՔԿՀ պետ Արտակ Ղազարյանի դեմ ղեկավարությունն արշավ է սկսել՝ ՔԿԾ պետ Ծովինար Թադեւոսյանը, առաջին տեղակալ Սահակ Գրիգորյանը, օպերատիվ վարչության պետ Անդրանիկ Մելոյանը: ՔԿՀ-ում ստուգումներ են: Ստուգող հանձնաժողովի ղեկավար, անվտանգության ապահովման բաժնի պետի տեղակալ Լիլիթ Ջհանգիրյանը հայտարարել է, որ անպայման «մի քանի արատավոր թերություններ կգտնի» Արթիկի բանտում: Հիշեցնենք. օրերս գրել էինք, որ ՔԿՀ-ի օպերները լսող սարքեր էին տեղադրել նույն ՔԿՀ-ի հսկիչների սենյակում, ինչը բացահայտվել էր, եւ Արտակ Ղազարյանը պահանջել էր մեղավորին պատժել, քանի որ նման գործառույթ օպերատիվ բաժինը չունի: Սակայն ՔԿԾ վարչակազմն օր առաջ ուզում է ազատվել Ղազարյանից: Ի դեպ, նա «Սեւան» ՔԿՀ-ի պետի պաշտոնից ազատվել եւ 2025թ. հոկտեմբերին նշանակվել էր Արթիկի բանտապետ, երբ գողականները բունտ էին արել բանտում՝ հրդեհել գույքը:

Դժվար է, բայց ոեսք է անել

Ինձ ամենից շատ զայրացնում են մարդկային լպիրշությունն ու անպատկառությունը, երբ սեփական սխալները գիտակցելու, գործած ավերածությունների համար զղջալու փոխարեն հոխորտում են ու սեւը սպիտակ ներկայացնում: Պետություն չունեինք՝ պարտություններից հետո պետություն ենք ձեռք բերել, Արցախը թոկ էր մեր վզին՝ հիմա ազատ ապրում ենք, անվտանգության երաշխավորից ազատվեցինք՝ անվտանգություն ապահովեցինք: Այս եւ այլ հիմարություններ ասվում են անամոթ աներեսությամբ, մարդկանց մտավոր ունակությունները ծաղրի ենթարկելով: Սրանք ոչ թե գրագետ մարդկանց համար են նախատեսված, այլ՝ կրթության ու գիտելիքի պակաս ունեցողների, որոնց իբրեւ թե ուզում էին կրթել, իսկ հիմա օգտվում են նրանց անգրագիտությունից եւ փորձում են իրականության շրջված պատկեր ներշնչել նրանց: Փորձում են խաղալ այդ մարդկանց նուրբ զգացումների, վախերի, անտեղյակության, համաշխարհային քաոսում վատ կողմնորոշվելու փաստի վրա: Եվ դա անում են, քանի որ վստահ են՝ ինչքան էլ գրագետ ու խելացի, հայրենասեր ու հայրենատեր մարդիկ փորձեն բացատրել, որ այդ ամենը սուտ է, կեղծիք ու մանիպուլյացիա, իրենց լսարանն ավելի մեծ է, իրենց ձայնն ավելի բարձր է, եւ իրենք կարողանալու են խաբել ու հասնել իրենց նպատակին: Ուժերի մեծ կենտրոնացում եւ ահռելի աշխատանք է պետք կատարել, որ պետբյուջեից սնվող այս խմբակին հնարավոր լինի չեզոքացնել, նրանց ստերը բացահայտել, քարոզչական հնարքները մերկացնել եւ ազնիվ ու ճշմարիտ գաղափարներով համակել հանրությանը: Երբ մի ողջ պետական ապարատ եւ մեր հարկերից գոյացող գանձարան իրենք տնօրինում են հենց մեր դեմ՝ մեր պետության, մեր արժեքների, մեր ինքնության, դա անելը շատ բարդ է, բայց անհրաժեշտ է: Եվ այդ խնդրի շուրջ պետք է միավորվի մեր հանրության որակյալ մասը:

Նախորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանը՝ մի խումբ արցախցիների մասնակցությամբ, «Ներառական զարգացում. ձեռքբերումներ եւ անելիքներ» խորագրով համաժողով էր կազմակերպել, որի ընթացքում ինքն ու իր նախարարները խոսում էին այն մասին, թե ինչպես են արցախցիների կյանքը դրախտի վերածել Հայաստանում: Համաժողովին մասնակցող մի արցախցի, որը հետո պարզվեց՝ Արագածոտնի մարզպետի խորհրդականն է, հոտնկայս շնորհակալություն հայտնեց Փաշինյանին: Պարզվում է՝ միջոցառումից շաբաթներ առաջ կառավարության աշխատակազմը գրություն է ուղարկել գերատեսչություններին եւ հորդորել հավաքագրել այն արցախցիներին, որոնք կհամաձայնեն մասնակցել այդ միջոցառմանը եւ կխոստանան իշխանությանը գովերգող տեքստեր ասել: Ընտրություններից առաջ Փաշինյանն արցախցիների նկատմամբ էլ է որոշել հոգեբանական տեռոր իրականացնել, նման միջոցառումներով ոչ միայն նրանց, այլեւ Հայաստանի բոլոր քաղաքացիներին ցույց տալ, որ անգամ արցախցիներն են իրեն ընդունում:

ՆՈՐ ՎԱՐՈՒՅԹ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մեր տեղեկություններով, իշխանությունների հրահանգով հերթական քրեական գրոհն է սկսվելու ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած Գագիկ Ծառուկյանի դեմ: Ըստ այդմ՝ Քննչական կոմիտեն «խոդ է տվել» տարիներ առաջ նախաձեռնված մի քրեական վարույթ՝ 2018-ի ընտրությունների մասին, որին ԲՀԿ-ն եւ «Ալյանս» կուսակցությունը մասնակցում էին «Ծառուկյան դաշինքով»: Վարույթը վերաբերում է ընտրությունների ժամանակ պետական ֆինանսավորումը կուսակցությունների միջեւ համաչափ չբաշխելուն: Ծառուկյանի պաշտպան Երեմ Սարգսյանը մեզ ասաց, որ նման տեղեկություն չունի: «Ալյանսի» նախագահ, հետախուզման մեջ գտնվող Տիգրան Ուրիխանյանը հաստատեց տեղեկությունը. «Իմ ինֆորմացիան հետեւյալն է. երեկ կամ նախորդ օրը կուսակցության գլխավոր քարտուղարի հետ կապվել է ՔԿ-ի Գայանե անունով քննիչ, որը հայտնել է, որ շուրջ 2 տարի առաջ կուսակցության ներկայացուցիչներից մեկի կողմից տրված դիմումի համաձայն՝ չեմ իմանում ինչ ճակատագրի արժանացած քրեական գործը վերսկսվել է, այն վերաբերում է պետական ֆինանսավորումը համաչափորեն չբաշխելուն»: Ինքը՝ Ուրիխանյանը, չգիտի, թե ով է ստացել այդ գումարը, ով չի բաշխել, իրեն դա չի էլ հետաքրքրում, եթե կա քրեական տարր, ապա կա համապատասխան ընթացք:

ՎԱՂԸ ՆՈՒՅՆ ԲԱՆԸ ՍՅՈՒՆԵՅԻՆԵՐԻՆ, ՋԵՐՄՈՒԿՅԻՆԵՐԻՆ Է՞Լ ԵՆ ԱՍԵԼՈՒ

*«Հրապարակի» զրուցակիցն ադրբեջանագետ **Անժելա Էլիբեգովան** է:*

- Բավականին բուռն նախընտրական քարոզարշավ է ընթանում, թեեւ պաշտոնական քարոզարշավը դեռ չի սկսվել: Իշխանությունն ամեն շաբաթ-կիրակի այցելում է մարզեր, շրջում է քաղաքների փողոցներով: Անցած կիրակի մի քանի տեղ կոնֆլիկտ եղավ քաղաքացիների հետ: Երեւի տպավորությունն այնքան վատ էր, որ օրվա վերջում Փաշինյանը հայտարարեց, որ եթե ՔՊ-ն չունենա բացարձակ մեծամասնություն, սեպտեմբերին դաժան պատերազմ տեղի կունենա: Ինչ կարծիք ունեք այս մասին:

- Նրա՝ պատերազմի թեզերի մասին խոսելը նշանակում է օգնել նրան, որովհետեւ պատերազմի նախադրյալները երբեք էլ բացառված չեն եղել, սակայն խոսել այն մասին, որ պատերազմ տեղի կունենա, նշանակում է շանտաժի ենթարկել ժողովրդին: Փաստացի, նա շանտաժի է ենթարկում հայ ժողովրդին, Ալիեւին շան պես փորձում է «քսի տալ» Հայաստանի վրա: Նիկոլ Փաշինյանը պանիկայի մեջ է, սակայն երկրի ղեկավարի պարագայում անթույլատրելի է քաղաքացու հետ այդ ձեւով խոսելը, էլ չեմ խոսում՝ մարդկային տեսանկյունից անընդունելի է, երբ ինչոր մի տղամարդ կնոջ հետ խոսում է նման բառապաշարով, այն էլ՝ փոքրիկի ներկայությամբ: Հաշվի առնելով, թե այդ ամենն ինչպիսի հանրային արձագանքի արժանացավ, կարող ենք վստահաբար ասել, որ մեր հանրությունը նման վարքագծի կողմնակից չէ, եւ հենց դա հանգեցրեց նրան, որ Փաշինյանը ներողություն խնդրեց արցախցի կնոջից, սակայն ակնհայտ է, որ դա ձեւականություն էր: Ինքը ներողություն է խնդրում, բայց իր քարոզիչները նացիստական հռետորաբանություն, այլատյացություն եւ ատելություն են տարածում: Այդ ամենից պարզ է դառնում, որ այս մարդն իր սխալը չի ընկալել եւ չի էլ ընկալելու, ուղղակի ձեւական ներողություն խնդրեց, ու վերջ: Այդ թիմն ատելությամբ է լցված հայ մարդկանց հանդեպ: Բայց այդ ամենը նրանք չեն անում ինքնագլուխ, դա ցույց է տալիս, թե Նիկոլ Փաշինյանն իրականում ինչ է մտածում:

- Կա մի խոսույթ, ցավոք, երբեմն նաեւ գրագետ մարդկանց կողմից, որ արցախցիները պետք է մնային Արցախում, դուրս չգային իրենց հողից, պայքարեին: Սա հենց Փաշինյանի «փախած» ձեւակերպման մեղմ տարբերակն է: Որպես ադրբեջանագետ, ինչ եք կարծում՝ արցախցին կարող էր մնալ Արցախում:

- Արցախցին միշտ է պայքարել: Ասեմ ավելին՝ նույնիսկ Ադրբեջանն է ընդունում, որ Արցախի ժողովուրդը պայքարել է: Թեպետ 200-ից ավելի զոհը, որ տվել են արցախցիները՝ մեկ օրում, ներկայացնում են ավելի քիչ, սակայն հյուծված, բլոկադայի մեջ մնացած, անօգնական ժողովուրդը կարողացել է արժանապատիվ մարտեր վարել եւ փորձել է հասնել հաջողության, սակայն քանի որ Հայաստանի իշխանություններն Արցախն արդեն ճանաչել էին Ադրբեջանի կազմում, արցախցի ժողովուրդը չէր կարող այլեւս ոչինչ անել: Ցանկացած մարդ, ով մեղադրում է արցախցիներին եւ ասում՝ պետք է մնային Արցախում, նրանք ասում են՝ թող արցախցիները մնային ու մեռնեին, որովհետեւ այլ տարբերակ չկար: Ես չեմ պատկերացնում մի բանական մարդու, որն իր արյունակիցներին մահ է ցանկանում, այն էլ՝ թշնամու ձեռքով: Ես ապշում եմ, որ երբեմն բանական մարդիկ նման մտքեր են տարածում, սակայն դրանք ծնունդ են առնում հիմնականում իշխանական ֆեյքերի կողմից: Միայն ուղեղը լվացած մարդիկ կարող են սեփական հայրենակիցների հանդեպ նման ատելություն տածել: Վաղը նույն բանը սյունեցիներին, ջերմուկցիներին ի՞լ են ասելու:

- Փաշինյանը Եվրախորհրդարանում հայտարարեց, որ Արցախի ժողովուրդը պետք է մեկընդմիշտ մոռանա Արցախ վերադարձի մասին:

- Ասեմ ավելին. այս բոլոր՝ պատերազմի սպառնալիքները եւս խոսում են այն մասին, որ այս մարդու խոստացած խաղաղությունը միֆ է եւ ոչ մի աղերս չունի իրականության հետ: Հնարավոր չէ, որ մի երկրի հետ խաղաղություն հաստատես, սակայն ամեն մի ինչին մանրուքից ասես՝ պատերազմ կսկսվի: «Արցախ» բառից պատերազմ կսկսվի, Վենսին գիրք նվիրելուց պատերազմ կսկսվի, եթե ՔՊ-ն մեծամասնություն չունենա, պատերազմ կսկսվի: Լավ, որքա՞ն կարելի է: Եթե ամեն մանրուքից կարող է պատերազմ սկսվել, նշանակում է՝ ոչ մի խաղաղություն էլ չկա: Խաղաղ երկրները ամեն փոքր պատճառով իրար վարի չեն տալիս: Անդադար շանտաժներ են անում, քանի որ գիտակցում են, որ ոչ մեկս էլ պատերազմ չենք ցանկանում, սակայն այդ մանիպուլյացիաները, այդ շանտաժները «պատահականորեն» անում են Փաշինյանն ու Ալիեւը՝ զուգահեռաբար: Խոսում են նույն բառամթերքով, նույն շանտաժներն են անում…. 2018-ին էլ նա սպառնում էր, որ եթե ինքը չլինի, Հայաստանը չի ունենա վարչապետ:

- Ի դեպ, 2025-ի օգոստոսին Փաշինյանը հայտարարեց, որ գտել է հավերժական խաղաղության բանալին, խոսքը Թրիփփի ուղու մասին է:

- Հավերժական խաղաղության պարագայում երբեք չես կարող հարեւան պետության տարածքներն օկուպացնել: Հայաստանից թող ադրբեջանական զորքերին դուրս բերեն, նոր հետո խոսեն խաղաղության մասին: Խաղաղության գնացող պետությունը չի կարող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը ցմահ ազատազրկել: Այդ ամենը խաղաղության մասին չէ: Ադրբեջանը մեծ քանակությամբ զորավարժություններ է անցկացնում, զենքեր է գնում: Նախորդ տարի միայն 15 հատ մեծ, մասշտաբային զորավարժություն են անցկացրել, իսկ ինչ է անում Հայաստանը, քանի՞ զորավարժություն են արել, բանակում կրճատումներ անելուց բացի:

- Հետեւո՞ւմ եք, թե ինչ են հայտարարում Ադրբեջանի իշխանությունները՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ:

- Ադրբեջանի իշխանությունը բացահայտ խոսում է այն մասին, որ իր համար միակ նախընտրելի թեկնածուն Նիկոլ Փաշինյանն է: Անգամ չեն էլ թաքցնում՝ ո՛չ ՁԼՄ-ներով, ո՛չ պաշտոնապես, ո՛չ էլ քարոզչական մակարդակում: Ադրբեջանի իշխանության պահանջն այն է, որ Նիկոլը վերընտրվի: Ադրբեջանն անթաքույց միջամտում է Հայաստանի ներքաղաքական հարցերին: Այստեղ արդեն չկա երկմտելու, կասկածելու տեղ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԵՆ ԳՈՂԱՆՈՒՄ

ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը երեկ մեղադրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ խաղաղության գաղափարը սեփականաշնորհելու մեջ:

«Փաշինյանը փորձում է սեփականաշնորհել խաղաղության գաղափարը՝ իր թիմը համարելով «խաղաղության կուսակցություն»: Ուզում եմ հիշեցնել, որ առաջին անգամ «խաղաղության կուսակցություն» եզրույթը հանրային բանավեճի մեջ մտցրել է Տեր-Պետրոսյանը, երբ իր հրաժարականի տեքստում ասել է, որ «խաղաղության կուսակցությունը պարտվեց պատերազմի կուսակցությանը»: Ու հիմա Փաշինյանը որոշել է ոչ միայն խաղաղության թեման սեփականաշնորհել, այլ նաեւ՝ «խաղաղության կուսակցություն» անվանումը»,- իր էջում գրել է Զուրաբյանը: Բայց սա միակ սեփականաշնորհումը չէ: Ընդդիմադիր գործիչները վաղուց են նկատել, որ Նիկոլ Փաշինյանն ու նրա թիմն ընդդիմությունից գաղափարներ են գողանում: Դա ինքնին վատ չէ, եթե անեն բացահայտ՝ ոչ ծածուկ, հրապարակայնորեն շնորհակալություն հայտնելով ընդդիմությանը՝ փայլուն գաղափարների, իրենց օգնելու համար: Բայց Փաշինյանն ու նրա նախարարներն ընդդիմության մտքերը սեփականում են՝ առանց որեւէ հղման, առանց աղբյուրները նշելու, ներկայացնելով որպես սեփական նախաձեռնություն: Կոպիտ ասած՝ ընդդիմությունն ինչից խոսում է, Նիկոլը որսում ու առաջ է տանում: Օրինակ՝ արտոնյալ վարկեր տրամադրելու առաջարկը:

Օրերս էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը Ֆեյսբուքում հայտարարեց, որ շուտով գյուղական տնտեսությունները, փոքր ֆերմերները կկարողանան ստանալ անտոկոս գյուղատնտեսական վարկեր: Հայտարարեց ու ավելացրեց. «Դուք ասում եք՝ մենք իրականացնում ենք»: Բայց մտքի հեղինակը ՀՅԴ-ն էր, ոչ թե ՔՊ-ն: Փոքր ֆերմերներին մինչեւ 15 մլն դրամ վարկեր տրամադրելու մասին դրույթը եղել է դեռեւս ՀՅԴ 2021 թվականի ծրագրում: Այսօր էլ դաշնակցականների տնտեսական ծրագրում կա այս կետը: ՀՅԴ պատգամավոր, տնտեսագետ **Թադեւոս Ավետիսյանը** հիշեցնում է, որ իրենց ծրագրի շնորհանդեսի ժամանակ էլ է այդ մասին խոսվել՝ որ պետությունը կսուբսիդավորի փոքր ֆերմերներին տրվող վարկերի տոկոսները: «Որեւէ մեկն իր ծրագրում վատ բան չի գրում: Այստեղ ավելի կարեւոր է, որ մենք նայենք իշխանական ուժի 5 տարվա ծրագրի կատարողականը, վստահության հարցը: Չափանիշներից մեկը եւ հիմնականն այն է, թե դրված ծրագրային նպատակներն ու խոստումները որ չափով են կատարված: Խոստումները վտանգավոր են, եթե դրանք ի սկզբանե հաշվարկված չեն, հիմնավոր չեն: Եթե խոստումը սուտ է, դա վտանգավոր է»:

Նա չի հետեւում իշխանականների խոսույթին, բայց վստահեցնում է, որ ՀՅԴ ծրագրում արտացոլված ցանկացած կետ հիմնված է հաշվարկի եւ հիմնավորման վրա: «Այսպիսի խոստումն ինքնին պատասխանատվություն է, որովհետեւ վաղը, երբ որ որեւէ քաղաքական ուժ իշխանություն դառնա, չափելի խոստումով, հետեւից շահառուն գալու է ու ասելու է՝ խոստացել էիր 15 մլն փոքր տնտեսություններին վարկ, դե տուր, մենք քեզ քվե ենք տվել, ձեւավորել ես իշխանություն, հիմա կատարիր խոստումդ: Սոցիալական ոլորտում մենք ասել ենք, որ թոշակները պետք է ինդեքսավորվեն եւ աճեն: Սա շատ կոնկրետ խոստում է, եւ վաղը քաղաքացին պետք է պահանջի մեզնից: Սա է ազնիվ զրույցը»,- ասում է Թադեւոս Ավետիսյանը:

«Յուրացված գաղափարները շատ-շատ են, պետք է նստեմ, մտածեմ: Դե, քաղաքականության մեջ «քոփիրայթ» չկա»,- ասում է ԼՀԿ ղեկավար **Էդմոն Մարուքյանը**: Նա հիշում է իրենից «գողացված» գաղափարները, որոնց վերաբերյալ նախկինում խոսել է: «Ինչո՞ւ պետք է Երեւանում մանկապարտեզները լինեն անվճար, իսկ մարզերում՝ վճարովի. դա անարդար է եւ չի տեղավորվում տարածքային համաչափ զարգացման տրամաբանության մեջ»,- հայտարարում էր նա դեռ 2020 թվականին: Անցյալ տարվանից, իսկ որոշ տեղերում՝ 26-ի սկզբից, մանկապարտեզները մարզերում դարձան անվճար, եւ այս մասին իրար հերթ չտալով, գլուխ գովելով՝ հայտարարում էին ՔՊ-ական համայնքապետերն ու մարզպետները: ԼՀԿ առաջարկներից էին նաեւ ոստիկանությունը ՆԳՆ դարձնելը, քննչական ծառայությունները մեկ մարմնում հավաքելը, դեսպանատների շենքերը գնելը: Փաշինյանն այս բոլոր նախաձեռնությունները ներկայացնում է որպես իր կառավարության նվաճումներ՝ խախտելով ընդդիմության հեղինակային իրավունքը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Փախչողն ինքն է ուրիշներին ասում

«Շաբաթ-կիրակի օրերի դեպքերը ցույց տվեցին, որ մարդիկ վիրտուալ փողոց դուրս եկան, ասեցին՝ մենք չենք համակերպվում Արցախի կորստի հետ, մենք չենք համաձայնում այդ կրճատ քարտեզի հետ, որը քո իրողությունն է, ոչ թե ժողովրդինը: Շաբաթ-կիրակի մենք տեսանք հայ ժողովրդի կամարտահայտությունը՝ որ Արցախի թեման փակ չէ». լրագրող, «Ազգային ժողովրդավարական բեւեռ» կազմակերպության անդամ Արմինե Սոխոյանն այսպիսի տպավորություն է ստացել Նիկոլ Փաշինյանի վերջին քարոզչական հանդիպումներից:

Նա, հիշեցնենք, այն կինն է, որն անցած շաբաթվա վերջին, հերթական մարզային այցելության ժամանակ սենսացիա արեց սոցցանցերով՝ Փաշինյանին հիշեցնելով. «Արցախը Հայաստան է, պարոն Փաշինյան, գիտե՞ք, եւ ղարաբաղյան շարժումը շարունակվում է»: Մեկ շաբաթ անց էլ՝ արդեն Երեւանի մետրոյում, մեկ այլ Արմինե՝ Արցախյան ազատամարտում զոհված դաշտային հրամանատար Մերուժան Մոսիյանի դուստրը՝ Արմինե Մոսիյանը, Փաշինյանի դեմքին նետեց. «Մենք Արցախից ենք, մենք ուրիշ քարտեզ ունենք: Դուք չեք կարող մեզ զրկել մեր Արցախում ապրելու հույսից»:

Ի՞նչ էր սա, կարողացա՞վ արդյոք Փաշինյանը հերթական անգամ ատելություն հրահրել արցախցիների հանդեպ, նրանց «փախնողներ» անվանելով:

Արմինե Սոխոյանն ասում է. «Կարծում եմ, որ Փաշինյանը շատ լավ հասկանում է, որ Արցախի թեման փակ չէ: Նա արդեն շատ լավ գիտակցում է, որ այդ շարժումը շարունակվում է: Մինչ այդ նա ներկուսակցական քարոզարշավի շրջանակում, սոցիալական հարցերից բացի, Արցախի թեմայով որեւէ խոսք չէր լսել: Ես նրան ընդամենը ներկայացրի փաստեր, թե ինչ պատճառով են արցախցիները ստիպված եղել իրենց տները լքել, եւ կիրակի օրը, երբ նա հանդիպեց Արմինե Մոսիյանին, նրան ներկայացվեց, որ արցախցին ուղղակի չի լքել իր տունը, այլ պարտադրված է եղել լքելու»: Փախչողը, ըստ Արմինե Սոխոյանի, Նիկոլ Փաշինյանն է, ահա ինչու նա կարծում է, թե բոլորը փախչող են: «Ուզում եմ հիշեցնել, որ 2008 թվականի մարտի 1-ին նա հազարավոր մարդկանց թողեց Շահումյանի արձանի մոտ ու փախավ, ու այդ մարդիկ չգիտեին, թե ինչ անեին, ու քանի որ նա ունի փախնողի հոգեբանություն, որ առաջին փախնողն ինքն է, նա բոլորին ուզում է այդպես դիտարկել: Արցախցին չի փախել, արցախցին ցեղասպանությունից մազապուրծ է եղել»:

Փաշինյանի խոսքն այն մասին, որ Հայաստանի ժողովուրդը գումարներ է փոխանցել Արցախ, Արմինեն համարում է ատելության քարոզ: «Հայ ժողովուրդն ամբողջ սրտով, առանց ափսոսանքի միշտ արցախցու կողքին է եղել, ու թող ինքը չփորձի ստանձնել հայ ժողովրդի դերը: Նա հայ ժողովուրդը չէ, նա ընդամենը փախնող Նիկոլ Փաշինյանն է՝ Ալիեւի կամակատարը»,- ասում է Արմինե Սոխոյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ՔՊ ՇԱՐՔԱՅԻՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՏԵՍՎԱԾ ՈՒ ԼՔՎԱԾ ԵՆ ԶԳՈՒՄ

Չնայած «Քաղպայմանագրի» ներկուսակցական քարոզարշավի ժամանակ Նիկոլ Փաշինյանը վերջերս հայտարարեց, որ «ՔՊ-ի՝ սահմանադրական մեծամասնություն ստանալն առավել քան իրատեսական է, հաղթելու է ՀՀ ժողովուրդը», իսկ դրանից առաջ էլ իր թիմակիցները քարոզչական արշավ էին իրականացնում, թե «մեր ուժը» հունիսի 7-ին ավելի շատ ձայն է ստանալու, քան ստացել է 2021 թվականին, սակայն, մեր աղբյուրների պատմածներից դատելով, իշխող թիմում տրամագծորեն հակառակ խոսակցություններ ու տրամադրություններ են տիրում:

Այստեղ անգամ խոսում են այն մասին, որ իրենց կազմած ցուցակից միայն 30-35 հոգի է անցնելու խորհրդարան: Իսկ 107 մանդատ ունեցող խորհրդարանում 35 մանդատ ունենալը նշանակում է 30 տոկոսից պակաս քվե ստանալ, ուստի ներկուսակցական ընտրությունների արդյունքում առաջին 50 ընտրյալներն այժմ կատաղի պայքար են մղում՝ ցուցակի առաջին 30-ի մեջ հայտնվելու համար: Որ իշխանության դիրքերն անսասան չեն, եւ սահմանադրական մեծամասնություն վերցնելու հայտարարությունն ընդամենը բաղձալի երազանք է, դա երեւում է իշխող խմբակի թե՛ հրապարակային վարքագծից, թե՛ ներքին անցուդարձից, ինչպես նաեւ՝ Նիկոլ Փաշինյանի անհավասարակշիռ պահվածքից: Անգամ նախընտրական փուլում նա չի կարողանում իրեն տիրապետել, որ մատ թափ չտա իր քաղաքականության հետեւանքով տուն ու հայրենիք կորցրած արցախցու վրա կամ իրեն հակաճառող քաղաքացիների վրա մուննաթ չգա, ձայն չբարձրացնի: Որից էլ անցել է շանտաժի եւ ժողովրդին պատերազմով վախեցնելու մեթոդին:

Իսկ թիմի հետ արդեն տեւական ժամանակ է՝ Փաշինյանն ու «ընտրյալների» 50-յակը, կարելի է ասել, կապը կտրել են: ՔՊ համաժողովից եւ ներկուսակցական ընտրություններից հետո «ուրախ ավտոբուսի պասաժիրները» ՔՊ թիմում մի աշխարհ են, իսկ 50-ից հետո տեղ զբաղեցրածները՝ բոլորովին այլ աշխարհ, որ իրար հետ գրեթե կապ չունեն: Այս մարդիկ տարրական պատկերացում չունեն իրենց ապագա անելիքների մասին, եւ նրանցից յուրաքանչյուրը զբաղված է իր ապագա տեղը գտնելու հարցով, քանի որ թիմում ցածրաձայն խոսակցություններ են պտտվում, թե հնարավոր է՝ անգամ 50 հոգի չանցնի, եւ խոսք է գնում 30-35 մանդատ ստանալու մասին:

Հիսունյակ չանցած մեր աղբյուրի դիտարկմամբ՝ Փաշինյանն էլ է կարծես համակերպվել այդ մտքի հետ, հակառակ դեպքում կհավաքեր թիմին եւ այլ մեսիջներ կփոխանցեր,-ասում է նա: Եվ, դիցուք, կապ չունի՝ ով որերորդ տեղն է զբաղեցնում, բոլորն էլ ինչ-որ կարգավիճակով ներկա են լինելու ապագա կառավարությունում կամ ինչ-որ պաշտոն ու կարգավիճակ են ստանալու: ՔՊ-ականները, կարելի է ասել, լիովին բախտի քմահաճույքին են մատնվել եւ այս օրերին անգամ խորհրդարան աշխատանքի չեն գնում, նիստերին չեն մասնակցում: Նախօրեին մենք արձանագրել էինք, որ ԱԺ մշտական հանձնաժողովներում կառավարության հնգամյա ծրագրի նախորդ տարվա հաշվետվության քննարկումներին ՔՊ-ականների «կրիզիս» է նկատվում, հաճախ նույնիսկ քվորումի խնդիր է առաջանում, եւ հանձնաժողովների նիստեր չեն գումարվում այնքան ժամանակ, մինչեւ զանգերով պատգամավորներին բերման չեն ենթարկում, կամ էլ ընդդիմադիրներն են փրկում իրավիճակը:

Շարքայիններն անհամբեր սպասում են մարտի 27-28-ին կայանալիք ՔՊ համաժողովին, այդ օրը ՔՊ ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլն է, առաջին 50 թեկնածուի միջեւ կրկին ընտրություն են անելու, որոշելու են՝ ով է վարչապետի թեկնածուն, եւ ընտրացուցակում ով որ տեղում պետք է լինի: Բայց շարքայիններին ոչ այնքան այդ հարցերն են հուզում, որքան իրենց ճակատագիրը՝ ինչ է իրենց սպասվում, որտեղ են իրենք լինելու, հուսով են, որ Նիկոլ Փաշինյանը գոնե այդ օրն ինչ-որ ձեւով կփարատի իրենց տագնապները:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԱՅԴ Ի՞ՆՉ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԷՐ, ՈՐ ԱՅԴՔԱՆ ԱՐԱԳ ՀՈԴՍ ՑՆԴԵՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պնդում է, որ սեպտեմբերին պատերազմ է լինելու, եթե իրենք չունենան սահմանադրական մեծամասնություն: Իսկ մեծամասնությունն անհրաժեշտ է, որ ցանկացած պահի Սահմանադրություն փոխի՝ Ալիեւի հրահանգով, Եկեղեցու դեմ պայքարն ավարտին հասցնի, սահմանազատում անի՝ նոր տարածքներ հանձնի, եւ խանգարող չլինի: «Էն, որ բոլորն ասում էին՝ «պատերազմ է լինելու», ես ասում էի՝ չի լինելու, լինելու է խաղաղություն, ասում էին՝ «ինչ գիտես», բա 7 տարվա վարչապետ եմ, եթե ես էդ իրավիճակը չկարողանամ գնահատեմ, ես ո՞նց եմ վարչապետ, հիմա էլ ասում եմ՝ լինելու է պատերազմ սեպտեմբերին ու՝ աղետաբեր պատերազմ, եթե ՔՊ կուսակցությունը սահմանադրական մեծամասնություն.... չեմ ասում՝ ընտրություններում հաղթի, ինձ ասում էիք՝ «18 թվին գայիր, ասեիր», հիմա ասում եմ»,- ասել է նա: Որտեղի՞ց Փաշինյանին այդ տեղեկությունը, եւ ինչո՞ւ է ժողովրդին շանտաժի ենթարկում: ԱԳ նախարարն ավելի զգույշ է. «Ես կարծում եմ՝ սեպտեմբեր ամիսը վարչապետը պայմանական է ասել, նկատի ունի ընտրություններից կարճ ժամանակ անց, իսկ որ այդպիսի հեռանկար կարա լինի, միանշանակ է»: «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածու Ռոբերտ Քոչարյանն էլ կարծում է, որ Նիկոլ Փաշինյանը սեփական «ժողովրդի վրա տղա է բերում»: Այն, որ Նիկոլ Փաշինյանը փորձում է վախի մթնոլորտ ստեղծելով ժողովրդից քվեներ կորզել, շաբաթ օրը աշտարակցիների հետ հանդիպման ժամանակ խոսել է ՀՀ 2-րդ նախագահը: «Սեփական ժողովրդի գլխին Ալիեւ տղա են բերում, որին բոբո սարքեն, որ հեսա կհարձակվեն, որ եւս քվեներ կորզեն ձեզանից»,- ասել է Քոչարյանը:

Ինչո՞ւ է Փաշինյանը սպառնում պատերազմով, ԱԺԲ խորհրդի անդամ **Արա Պապյանը** մեզ հետ զրույցում ասում է. «Սպառնալ սեփական ժողովրդին՝ խիստ անընդունելի է: Հայ ժողովրդի անվտանգության երաշխավորը չի կարող իր ժողովրդին պատերազմով վախեցնել, սա մեծագույն աբսուրդ ու խայտառակություն է: Այս մարդն ամիսներ շարունակ պնդում էր եւ մեզ էլ վստահեցնում էր, որ խաղաղություն է հաստատվելու, այժմ հարց է ծագում՝ այդ ի՞նչ խաղաղության մասին էիր խոսում, որ այդքան արագ հօդս ցնդեց: Եթե այդ խաղաղությունը կախված է միայն մի կողմից կամ մեկ անձից, ապա դա նշանակում է, որ խոսքը ոչ թե խաղաղության, այլ՝ գործարքի մասին է, եւ այս մարդն առաջարկում է գործարքը շարունակել: Մենք բազմիցս ենք ասել, որ սա խաղաղություն չէ, քանի որ ադրբեջանական կողմից չենք նկատում որեւիցե անկեղծ քայլ եւ ձգտում: Կա զավթողական հռետորաբանության մեծացում, կա «Արեւմտյան Ադրբեջան» հայեցակարգ, որը Հայաստանի սուվերեն ողջ տարածքն Ադրբեջանի մաս դարձնելու մասին է: Նիկոլ Փաշինյանը «խաղաղություն» բառը փորձում է ծառայեցնել ընտրությունների պատրվակով, այդքան մի բան»:

Պապյանը նաեւ անդրադարձավ առաջիկա ընտրություններին: Նրա խոսքով՝ յուրաքանչյուր իշխանություն էլ մեծ ռեսուրսներ ունի, եւ իշխանությունների դեմ պայքարելը հեշտ չէ. «Բանակ, ոստիկանություն, ուժայիններ... դրանք՝ բոլորը, ենթարկվում են իշխանություններին: Հայաստանում միշտ էլ հաղթել է իշխանությունը՝ իր ունեցած ռեսուրսների շնորհիվ: Հարյուր հազարավոր մարդիկ են իրականում նրանք, ունեն ընտանիքներ, որոնց վրա ճնշումներ են գործադրում, կան տեղեկություններ, որ նման ճնշումներ հատկապես առողջապահական հիմնարկություններում են նկատում, օրինակ՝ պետության կողմից ֆինանսավորվող պոլիկլինիկաներ եւ այլն: Ես ունեմ տեղեկություններ, որ անգամ ճնշումներ են գործադրում այն մասնավոր ընկերությունների վրա, որոնք պետությունից գումարներ են ստանում՝ որպես պետական պատվեր: Այն, ինչ այժմ տեղի է ունենում, ընտրական օրենսգրքի խախտում է: Ընտրապայքարը պետք է ընտրությունից 40 օր առաջ սկսվի: Բայց Նիկոլ Փաշինյանը խախտում է օրենքները, սկզբում սա կոչում էր ներկուսակցական փրայմերիզ, սակայն հետո ազատվեցին այդ ձեւականությունից եւ քարոզարշավ են իրականացնում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇԱՆՏԱԺԸ ՎԿԱՅՈՒՄ Է, ՈՐ ՄՆԱՑԱԾ ՀՆԱՐՔՆԵՐՆ ԷՖԵԿՏԻՎ ՉԵՆ

Հարցազրույց քաղաքագետ ***Հակոբ Բադալյանի*** *հետ*

Հայկա ԱԼՈՅԱՆ

- Փաշինյանն իր նախաձեռնությամբ հեռախոսազրույց է ունեցել Պուտինի հետ: Ի՞նչն է ստիպել նրան զանգել Պուտինին, եթե Ռուսաստանը Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է վարում:

- Գուցե հիբրիդային հարձակումների առաջիկա պլաններին ծանոթանալու համար. սա, իհարկե, կեսկատակ: Գործնականում, անշուշտ, վաղուց հասկանալի է, որ այդ հիբրիդային գրոհները ՀՀ իշխանության քարոզչական թեզն են եւ ոչ այլ բան: Ինչ վերաբերում է Փաշինյանի նախաձեռնությանը, ապա, եթե չեմ սխալվում, վերջին հեռախոսազրույցը նրանց միջեւ դարձյալ տեղի էր ունեցել իր նախաձեռնությամբ: Այստեղ եւս մի հանգամանք կա. ռուսական կողմը հաղորդագրության մեջ չէր խոսել այն մասին, որ պայմանավորվել են առիթի դեպքում շարունակել քննարկումները հանդիպման ձեւաչափով, իսկ հայկական կողմի տարածած հաղորդագրության մեջ դա նշվում է: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ, ըստ ամենայնի, Երեւանն ակնկալում է հանդիպման ձեւաչափ՝ Փաշինյան-Պուտին, Մոսկվա այց, թերեւս: Եվ այն, որ Ռուսաստանը չի մատնանշել դա, ինձ թույլ է տալիս մտածել, որ այդ հարցում դեռեւս չկա Մոսկվայի համաձայնությունը:

- Իսկ ինչո՞ւ է Փաշինյանն ակնկալում հանդիպում Պուտինի հետ:

- Այստեղ կարող ենք դիտարկել մի շարք հնարավոր մոտիվներ՝ կապված թե՛ Հայաստանի նախընտրական վիճակի հետ, թե՛ ընդհանուր ռեգիոնալ վիճակի հետ եւ թե՛ հայ-ռուսական փոխհարաբերության:

- Ոմանց թվում է, թե Փաշինյանը Ռուսաստանին տարածաշրջանից դուրս է մղում, ինչո՞ւ պիտի նորից գնա Ռուսաստանի ուղղությամբ:

- Ինձ երբեք այդպես չի թվացել, ես վերջին 3-4 տարիներին մշտապես արձանագրել եմ, որ չեմ տեսնում Փաշինյանի գործուն հակառուսական եւ առավել եւս՝ Ռուսաստանին ռեգիոնից դուրս թողնելու քաղաքականություն: Իհարկե, Փաշինյանը գուցե արել է քայլեր, որոնք, իր գնահատմամբ, եղել են արձագանք նաեւ Ռուսաստանի շուրջ ստեղծված իրավիճակին, բայց դա այլ է՝ արձագանքել իրավիճակին գուցե սխալ եզրահանգումներով, սակայն նպատակային հակառուսական քաղաքականություն Նիկոլ Փաշինյանը չի վարել եւ չի վարում: Ռուսաստանի հետ այսպիսի կոմունիկացիայից կարող են զարմանալ մարդիկ, որոնք արձանագրում են, թե Փաշինյանը վարում է Ռուսաստանին ռեգիոնից դուրս թողնելու քաղաքականություն:

- Փաշինյանին քաղաքացիները վերջին շրջանում տհաճ հարցեր են տալիս, սա ինչի՞ մասին է խոսում, արդյո՞ք խաղաղության օրակարգը, թոշակը բարձրացնելը, առողջության ապահովագրումը որեւէ ազդեցություն ունեցան:

- Դրա «լավագույն» ցուցիչն այն է, որ Նիկոլ Փաշինյանն ու ողջ իշխանական համակարգն աշխատեցնում են պատերազմի շանտաժը: Իհարկե, «լավագույն»՝ չակերտավոր իմաստով, որովհետեւ սեփական քաղաքացիներին շանտաժի ենթարկելը չի կարող բուն իմաստով լավագույնը լինել: Սա լավագույն ցուցիչն է, թե ինչ էֆեկտիվություն ունի մնացյալ քարոզչությունը, եւ եթե թոշակների կամ այլ սոցիալական բնույթի հարցեր էֆեկտիվություն ունենային, ինչո՞ւ պիտի իշխանությունը ձգտեր այդպիսի շանտաժով հարաբերվել հասարակության, քաղաքացիների հետ: Սա նշանակում է, որ առնվազն կան լուրջ մտահոգություններ՝ կապված այդ քարոզչական գործողությունների էֆեկտի հետ:

- Սեպտեմբերին պատերազմ սկսվելու մասին ասվածը ոմանք մեկնաբանում են, թե գուցե Փաշինյանն ինչ-որ բան գիտի եւ ապահովագրում է իրեն:

- Եթե Նիկոլ Փաշինյանը գիտի ինչ-որ բան, ապա դա կարող է նշանակել միայն մեկ բան, որ ինքը մասնակից է այդ «ինչ-որ բան»-ին: Եթե սա պարզապես քարոզչության համար է, այսինքն՝ խաղալ հանրային զգացումների վրա՝ վախի, բնազդի վրա եւ այլն, եւ դրանից բացի որեւէ այլ հիմք չկա, ապա շատ ավելի հասկանալի է, թե ինչի մասին է խոսքը: Բայց ավելի լայն իմաստով պետության ղեկավարը, թեկուզ նախընտրական տրամաբանությամբ, շանտաժի է ենթարկում իր պետության քաղաքացիներին, դրանով գործնականում ցույց է տալիս, որ իր քաղաքականության արդյունքում պետությունն՝ որպես քաղաքական սուբյեկտ, գոյություն չունի: Որովհետեւ սեփական քաղաքացիներին ենթարկել պատերազմի շանտաժի, այն դեպքում, երբ չկա հաստատված եւ երաշխավորված խաղաղության որեւէ մեխանիզմ, դա նշանակում է շանտաժի բանալի տալ նաեւ այն պետությունների ձեռքը, որոնք հավակնություն ունեն Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Իսկ մենք նվազագույնը գիտենք երկու այդպիսի պետություն, եւ մեկը նույնիսկ չի թաքցնում իր այդ հավակնությունները՝ նկատի ունեմ Ադրբեջանը:

- Կարո՞ղ ենք ենթադրել, որ Փաշինյանն ուղերձ է հղում Ադրբեջանին, որ եթե ինքը չընտրվի, հարձակվեն Հայաստանի վրա:

- Ես կարծում եմ՝ հայտարարությունները միտված են Հայաստանի հանրությանը շանտաժի ենթարկելուն, եւ կարծում եմ՝ Ադրբեջանն իր ռազմական գործողությունների պլանները գծագրում է ոչ թե Նիկոլ Փաշինյանի հրավերով կամ թույլ տալ-չտալով, այլ՝ ռեգիոնալ միջավայրում առավել խոշոր դերակատարների տրամադրություններով, հակվածությամբ եւ այլն: Այդ տեսանկյունից Նիկոլ Փաշինյանն Ադրբեջանին, բառի բուն կամ չակերտավոր իմաստով, ծառայություն մատուցել է ոչ թե շանտաժի մասին այս հայտարարություններով, այլ ադրբեջանական նարատիվները եւ ադրբեջանական օրակարգից բխող մոտեցումները լեգիտիմացնելով, դրանց հանդեպ իր լոյալ վերաբերմունքով: Այս հայտարարությունը, կարծում եմ, միտված է Հայաստանի հասարակության վրա հոգեբանորեն ազդելուն:

- Արցախցիների հանդեպ ատելության ուղղորդված պոռթկումն ընտրություններից առաջ սրվելո՞ւ է:

- Ընտրությունից առաջ Նիկոլ Փաշինյանը փնտրելու է հնարավորինս շատ պատասխանատուներ՝ իրենից դուրս: Եվ քանի որ այս ընտրությանը մոտենում է Արցախի կորստի բեռով, եւ դա անընդհատ իրեն հիշեցնելու են, ապա արցախցիները Փաշինյանից դուրս պատասխանատուներից մեկն են: Հետեւաբար զարմանալի չէ, որ այս ալիքը խթանվում է: Փաշինյանը փորձելու է այսկերպ հասարակական բաժանարար գծերը խորացնել, որովհետեւ իր քաղաքական իշխանության պատվանդանը միշտ եղել է տարբեր շերտերի միջեւ ծայրահեղացված, բեւեռացված դիրքավորումներ խթանելը: Ինչքան շատ բաժանարար գիծ եւ ծայրահեղ դիրքավորում՝ այնքան ավելի ամուր պատվանդան Փաշինյանի իշխանության համար: Ցավոք սրտի, նա անկարող եղավ 18-ին կուտակված այդ հսկայական դրական էներգիան վերածել ավելի ստեղծարար պատվանդանի, ինչը Հայաստանի հեռանկարները կկառուցեր բոլորովին այլ տրամաբանությամբ, եւ աղետների փոխարեն մենք կունենայինք իսկապես պետության ամրացում: Նա ընտրեց այդ տարբերակը, այդպիսի իշխանություն կառուցելու տարբերակը եւ 2018-ից ի վեր միայն խորացնում է այդ բեւեռացվածության վրա դրված խաղադրույքը: Դա է իր իշխանության հիմքը:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱ, ՈՐ ՍԱ ՇԱՆՏԱԺ Է՝ ԻՐԵՆՑ ԷՄՈՑԻԱՆԵՐԻ ՀԵՏ ԵՆ ԽԱՂՈՒՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարցազրույց Արցախի մարդու իրավունքների պաշտպան **Գեղամ Ստեփանյանի** *հետ*

- Հանրությունը տեղեկատվական տեռորի է ենթարկվում այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանն արցախցի կնոջը երեխայի ներկայությամբ անվանեց «փախածներ», ապա մատ թափ տվեց կնոջ վրա, գոռգոռաց եւ սպառնաց: Փաշինյանը դեպքից ժամեր անց ներողություն խնդրեց, սակայն դրանից իրավիճակը չփոխվեց: Համացանցում արցախցիների դեմ ատելության խոսքի նոր ալիք առաջացրեց Փաշինյանը՝ իշխանական կայքերի ակտիվ ներգրավմամբ: Ի՞նչ գնահատական կտաք արցախցիներին ուղղված այս տգեղ պիտակավորմանը:

- Նիկոլ Փաշինյանի հետ կապված միջադեպից շատերը զարմացել են, սակայն այն ինձ համար նորություն չէր: Արցախցիների դեմ ատելության խոսք գեներացվել ու տարածվել է հենց Նիկոլ Փաշինյանին սպասարկող մեդիաների միջոցով, երբեմն՝ ֆեյքային գրառումներով, իսկ շատ հաճախ՝ նաեւ իրական մարդկանց՝ քաղաքական գործիչների կողմից: Բազում նման օրինակներ ունենք. պատգամավոր Գագիկ Մելքոնյան, Խաչատուր Սուքիասյան, Ալեն Սիմոնյան եւ այլք: Բանը հասել է նրան, որ պատգամավոր Հասմիկ Հակոբյանը Հայաստանի ժողովրդավարության նահանջը կապում է արցախցիների՝ Հայաստան գալու հետ եւ այլն: Կիրակի մետրոյում տեղի ունեցածն այդ ամենի տրամաբանական շարունակությունն էր: Արցախցի կինը մի քանի անգամ պնդեց, որ չի ցանկանում բանավիճել, չի ցանկանում շարունակել զրույցը, սակայն Նիկոլ Փաշինյանը դիտավորյալ սադրեց, փորձեց իր կարծիքը պարտադրել մարդկանց, սակայն ստացավ իր պահվածքին համարժեք արձագանք: Հանրային արձագանքը նույնպես ունեցավ մեծ ազդեցություն, ինչն էլ իր հերթին ներողության պատճառ դարձավ.... իհարկե, ես չեմ կարծում, որ Փաշինյանը զղջում է, նա պարզապես վախենում է, որ իր վարկանիշին կարող է վնաս հասցնել կատարվածը, եւ այդ պատճառով ներողություն է հայցում:

- Նիկոլ Փաշինյանը նաեւ սպառնում է պատերազմով: Առաջ ասում էր, որ եթե տանք Արցախը, Հայաստանը կլինի խաղաղ, այժմ ասում է՝ եթե ես չունենամ սահմանադրական մեծամասնություն, սեպտեմբերին պատերազմ կսկսվի:

- Այս ամենը նախընտրական տրամաբանության մեջ է: ԱԳ նախարարն էլ կրկնեց Փաշինյանի խոսքերը եւ պնդեց, որ լավ են անում, ճիշտ են անում, սակայն ժողովուրդը պետք է հասկանա, որ սա սովորական շանտաժ է, մարդկանց էմոցիաների հետ են խաղում, ինչը խիստ անընդունելի երեւույթ է, սակայն ՔՊ-ն իր գործունեության ընթացքում անընդունելի քայլեր այնքան շատ է արել, որ այլեւս չենք զարմանում:

- Տեղեկություններ կան, որ արցախցիներին այս փուլում անձնագրեր չեն տրամադրում՝ մտավախություն ունենալով, որ նրանք կմասնակցեն առաջիկա ընտրություններին եւ իրենց քվեն կտան ընդդիմությանը:

- Անձնագիր տրամադրելու հարցով ես պաշտոնական պատասխան եմ ստացել, ասում են, որ կա ծանրաբեռնվածության խնդիր, ինչը հանգեցրել է նրան, որ որոշակի ժամանակահատվածով պրոցեսները հետաձգվում են, սակայն պնդում են, որ մի քանի շաբաթվա ընթացքում նորից վերադառնալու են երկամսյա ժամկետներին եւ կարողանալու են անձնագրերի տրամադրումը կազմակերպել հայտն ընդունելուց մաքսիմում երկու ամիս անց: Այժմ ավելի երկար է տեւում պրոցեսը՝ չորսուկես ամիս, ինչը դարձել է նման խոսակցությունների եւ մտավախությունների օբյեկտիվ պատճառ: Հուսանք, որ մեզ խոստացած ժամանակահատվածին կվերադառնան, տեսնենք, թե ինչպես կլինի:

- Ի դեպ, Փաշինյանն ու ՔՊ-ականները երբեմն տեսարաններ են բեմադրում, թե իբրեւ արցախցիները սիրում են իրենց, ընդունում են, անգամ երբեմն շնորհակալություն են հայտնում: Բայց այդ ամենն այնքան կասկածելի է, որ մարդիկ պարզապես չեն հավատում, թե կադրերում արցախցի ներկայացող քաղաքացիներն իսկապես արցախցի են:

- Մի քանի օր առաջ միջոցառումներից մեկի ժամանակ մեծ թիվ էին կազմում այն արցախցիները, ովքեր աշխատում են մարզպետարաններում, համայնքապետարաններում եւ այլն: Դրանով է պայմանավորված նրանց շնորհակալությունների «պերեդոզը», սակայն, այնուամենայնիվ, պետք է ասեմ, որ քիչ, սակայն կան այնպիսի արցախցիներ, ովքեր պաշտպանում են Փաշինյանի տեսակետները, բայց ճնշող մեծամասնությունն ունի լրիվ այլ կարծիք:

ՍԱՄՄԱՆՎԵԼ Է ՏՈՒՐՔ՝ ԽԱՂԱՂ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ներծավոր Արեւելքում ԱՄՆ-ի գործողություններն ու պահվածքը հերթական անգամ ապացուցում են ամերիկյան պետական գործիչ եւ քաղաքագետ Հենրի Քիսինջերի հայտնի խոսքերը. «Ամերիկայի թշնամին լինելը կարող է վտանգավոր լինել, բայց Ամերիկայի բարեկամը լինելը մահացու է»: Այս խոսքերի ճշմարտացիությունն իրենց վրա զգացել ու շարունակում են զգալ աշխարհի շատ երկրներ, որոնց պարտադրել են լինել ԱՄՆ բարեկամը, եւ, ցավոք, այդ պարտադրանքի զոհերի ցանկում ենք նաեւ մենք:

Պարսից ծոցի արաբական պետություններն ԱՄՆ-ին համարում էին իրենց դաշնակիցը եւ անվտանգության երաշխավորը: Բայց ԱՄՆ-ն պատերազմ սկսեց Իրանի դեմ՝ առանց հաշվի առնելու այդ երկրների կարծիքը, գուցե նույնիսկ առանց տեղյակ պահելու: Արեւմտյան մամուլը գրում է, որ ԱՄՆ նախագահ Թրամփը Պարսից ծոցի երկրներից 5 տրիլիոն դոլար գումար է պահանջել՝ պատերազմը դադարեցնելու համար: Թե ինչու պետք է այդ երկրները վճարեն ոչ իրենց սկսած պատերազմը կանգնեցնելու համար, որտեղ իրենք տուժողի դերում են, դժվար է հասկանալ, բայց կարելի է հիմնավորել:

Որպեսզի պարզ դառնա, թե ինչ ահռելի գումար է պահանջում ԱՄՆ-ն՝ պատերազմը դադարեցնելու համար, միայն ասենք, որ ներկայիս միջազգային գներով 5 տրիլիոն դոլարը համարժեք է 50 միլիարդ բարել նավթին: Սաուդյան Արաբիան, որն ամենամեծ նավթ արդյունահանող եւ արտահանող երկիրն է աշխարհում, օրական արդյունահանում է 11 միլիոն բարել նավթ, այսինքն՝ ԱՄՆ-ն պահանջում է Սաուդյան Արաբիայի 12-13 տարվա նավթի արդյունահանման ամբողջ ծավալը, այդ երկրի նավթային ամբողջ ռեսուրսի, հետազոտված պաշարների 20 տոկոսը: Ընդ որում, այդ նավթը հենց այնպես չի դուրս գալիս երկրի մակերեւույթ, դրա արդյունահանման վրա գումար է ծախսվում: Ստացվում է, որ եթե վերցնենք միայն Սաուդյան Արաբիան, ապա այդ երկիրը պետք է 13 տարի սեփական գրպանից գումար ծախսի, 50 միլիարդ բարել նավթ արդյունահանի եւ այդ ամբողջ նավթն ուղարկի Միացյալ Նահանգներին, միայն թե ԱՄՆ-ն իրենց թողնի խաղաղ ապրել: ԱՄՆ-ն խաղաղության համար տուրք է ուզում եւ ոչ միայն Սաուդյան Արաբիայից, Բահրեյնից, Քուվեյթից, Արաբական Միացյալ Էմիրություններից, այլեւ՝ բոլոր երկրներից: Ուզելու է, որպեսզի աշխարհը վճարի իրեն՝ խաղաղ ապրելու իրավունքի համար: Սա է ԱՄՆ գոյության նոր կոնցեպցիան:

Ինչո՞ւ Միացյալ Նահանգները կեղծ դաշնակցից վերածվեց մահացու թշնամու: Պետք է հասկանալ, որ Միացյալ Նահանգները նախկինում աշխարհի նկատմամբ ունեցած իր հեգեմոնիան պահում էր աշխարհի առաջատար տնտեսությունը լինելու գործոնի շնորհիվ: Բոլորի համար շահավետ էր լավ հարաբերություններ ունենալ Միացյալ Նահանգների հետ, քանի որ աշխարհի ՀՆԱ-ի մեծ մասը ստեղծվում էր այդ երկրում, իսկ սա նշանակում էր, որ եթե քո երկրին ինչ-որ բան է պետք, սկսած ապրանքներից, վերջացրած ծառայություններով եւ տեխնոլոգիաներով, դու, այսպես թե այնպես, պետք է դիմես ԱՄՆ-ին՝ դրանք ձեռք բերելու համար, եթե վաճառելու բան ունես, ամենալավ գնորդն ԱՄՆ-ն է: Դրա համար աշխարհի երկրների մեծ մասը կամավոր կամ պարտադրանքով ընդունել էր ԱՄՆ-ի առաջնորդությունը եւ համակերպվել դրա հետ:

Ավելի պարզ լինելու համար մի օրինակ բերենք: Աշխարհի ամենամեծ նավթարդյունահանող երկիրը՝ Սաուդյան Արաբիան, երկու պայմանագիր էր ստորագրել է ԱՄՆ-ի հետ. մեկը 1945 թվականին, որը հայտնի է «Քվինսի պակտ» անունով, քանի որ ստորագրվել է ամերիկյան «Քվինսի» հածանավի վրա՝ ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի եւ Սաուդյան Արաբիայի միապետ Աբդուլ-Ազիզ իբն Աբդուլռահման Ալ Սաուդի միջեւ, ըստ որի՝ ԱՄՆ-ն մենաշնորհ ստացավ Սաուդյան Արաբիայի նավթը հետազոտելու, զարգացնելու եւ գնելու հարցում, իր հերթին երաշխավորելով սաուդցիների պաշտպանությունը ցանկացած արտաքին սպառնալիքից: Իսկ, ի լրումն դրա, 1974 թվականին ստորագրվեց մեկ այլ պայմանագիր, ըստ որի՝ Սաուդյան Արաբիան պարտավորվեց իր նավթը համաշխարհային շուկայում վաճառել բացառապես դոլարով: Այդ պայմանագիրը ստորագրվեց 50 տարի ժամկետով եւ 50 տարի ապահովեց դոլարի, հետեւաբար եւ՝ ԱՄՆ-ի համաշխարհային գերիշխանությունը: 1945-ին եւ նույնիսկ 1973 թ. ԱՄՆ-ն աշխարհի ամենամեծ նավթի գնորդն էր, ամենամեծ տնտեսությունն ուներ, եւ Սաուդյան Արաբիան այլընտրանք չուներ: Բայց 50 տարվա մեջ շատ բան փոխվեց:

Սաուդյան Արաբիան երկար սպասում էր այդ համաձայնագրի ավարտին, որից հետո այդ երկիրը, ազատվելով դրա պարտադրանքից, սկսեց նավթ վաճառել նաեւ չինական յուանով, միացավ ԲՐԻԿՍ-ին, այդ կազմակերպությանը միացավ նաեւ նավթի մեկ այլ խոշոր արդյունահանող՝ Արաբական Միացյալ Էմիրությունները: Նրանք Չինաստանի հետ համագործակցությունը դիտարկում էին որպես իրենց անկախության եւ ինքնիշխանության ապահովման երաշխիք, բացի դա, Չինաստանը դարձել էր աշխարհում նավթի խոշորագույն ներմուծողն ու ամենաարագ զարգացող տնտեսությունը, որի շուկա մուտք ունենալու համար պայքարում էին նավթի բոլոր խոշոր արտահանողները:

Կարող էր Միացյալ Նահանգները ներել իր վասալների ազատատենչության նման դրսեւորումները. միանշանակ՝ ոչ: Չունենալով այդ երկրների վրա ազդելու տնտեսական լծակներ, ԱՄՆ-ն որոշեց նրանց պատժել ռազմական ճանապարհով: Ճիշտ եւ արդար կլիներ, եթե այդ երկրների անվտանգության երաշխավուր ԱՄՆ-ն՝ ինքը պատերազմ սկսեր եւ ուղղակի օկուպացներ այդ երկրները, բայց ԱՄՆ-ն ավելի հնարամիտ վարվեց՝ պատերազմ սկսեց Իրանի դեմ, թող Իրանն իր հրթիռներով ոչնչացնի այդ երկրները, դրանով միաժամանակ երկու հարց կլուծվի՝ եւ Իրանի, եւ Պարսից ծոցի արաբական երկրների թուլացումը եւ, եթե հնարավոր լինի՝ հնազանդեցումը:

Ինչպես ցանկացած թուլացած եւ մեռնող կայսրություն, ԱՄՆ-ի՝ որպես կայսրության մահը եւս ուղեկցվելու է նման թունավոր արտանետումներով: Այդ երկիրն իր ունեցած ամբողջ ռազմական ներուժն օգտագործելու է որպես վերջին լծակ՝ աշխարհի մյուս երկրներին վախեցնելու, շանտաժի ենթարկելու եւ նրանց հաշվին իր գոյությունը եւս որոշ ժամանակ երկարաձգելու համար:

Սա կարեւոր է նաեւ մեզ համար, հասկանալու, որ ԱՄՆ-ն չի կարող լինել դաշնակից, չի կարող լինել անկախության կամ անվտանգության երաշխավոր, նա պատրաստ կլինի վաճառել Հայաստանն էլ, հայությանն էլ, եթե դրա համար լավ գին վճարող լինի: Իսկ գին վճարող հաստատ կլինի, եթե, իհարկե, մենք թույլ տանք, որ մեզ վերաբերվեն որպես անտեր ապրանքի, որի հետ կարելի է վարվել՝ ոնց մտքներով անցնի:

ԱՄՆ



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԴԺՎԱՐ ԹԵ ԼԻՆԻ ԱՎԵԼԻ ՈՂՋ ԱԴԵԿՎԱՏ ՂԵԿԱՎԱՐ, ՔԱՆ ՆԻԿՈԼՆ Է

«Ես նկատի ունեմ, որ մենք, այո, 2018, 19, 20, 21, 22, 23, 24 թվականներին ցուցաբերել ենք մեր ժողովրդի կողմից մեզ պատվիրակված առաջնորդական պարտականությունները եւ կանխորոշված աղետաբեր ճանապարհից դուրս ենք բերել մեր երկիրը»,- ասում է Նիկոլը, որը դեռեւս զբաղեցնում է ՀՀ վարչապետի պաշտոնը: Եվ, ինչպես միշտ, սուտ է խոսում: Եթե ինքը «կանխորոշված աղետաբեր ճանապարհից դուրս է բերել մեր երկիրը», ապա 2018 եւ 2019 թվականներին ինչպե՞ս կարող էր իր համար Արցախը լինել Հայաստան: Ավելին, Արցախը, իր ասելով, ՀՀ 11-րդ մարզն էր, իսկ Արցախի նախագահ Բակո Սահակյանը՝ մարզպետ: Իսկ իր խմբակի անդամներից Ալենի ու Սուրենի համար նաեւ Ակնան էր հայրենիք, եւ դրա շուրջ իրենք բանավիճում էին Սերժ Սարգսյանի հետ, որն ադրբեջանական Աղդամը հայրենիք չէր համարում:

Շարունակենք: Եթե ինքը «կանխորոշված աղետաբեր ճանապարհից դուրս է բերել մեր երկիրը», ապա ինչպես ստացվեց, որ 2020 թ. հուլիսին Տավուշի դիրքային մարտի հաջողության համար մեկ հոգի արժանացավ Ազգային հերոսի կոչման, իսկ մնացած 72 հոգին՝ առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանին: Որքան տեղյակ եմ, Տավուշի դիրքային մարտում մեր զինվորականները կռվում էին ոչ թե այլմոլորակայիններ, այլ հենց ադրբեջանցիների դեմ: Դրանով նրանք շարունակում էին այն գործընթացը՝ Ղարաբաղյան շարժումը, որ սկսվել էր 1988 թվականին: Ու ինքն էլ, որպես հայոց պետության ղեկավար, պարգեւներ էր շնորհում մասնակիցներին:

Գանք 2021 թվական: 44-օրյա պատերազմում իր «գերագույն հրամանատարությամբ» խայտառակ պարտություն կրելուց հետո կորսված լեգիտիմությունը վերականգնելու նպատակով հրաժարական ներկայացրեց, իհարկե՝ ձեւական: Ու կազմակերպեց Ազգային ժողովի արտահերթ ընտրություն: Եթե 2021-ին ինքը «կանխորոշված աղետաբեր ճանապարհից դուրս էր բերել մեր երկիրը», ապա ինչպես պատահեց, որ ԱԺ արտահերթ ընտրության մասնակցելիս իր կուսակցության նախընտրական ծրագրում ներկայացրեց Արցախին առնչվող բազմաթիվ կետեր, ինչը, իբրեւ թե, թույլ էր տալու, որ պաշտպանվեր արցախցիների անվտանգությունը: Ինչպես միշտ, դա եւս գրվեց ավազին, քանի որ իր դեպքում սեփական (՞՞՞) ժողովրդին ինչ-որ բան խոստանալն ու դա չկատարելը հարազատության պես ինչ-որ բան է:

Հասանք 2022-ի ջրբաժան թվականը: Այդ թվականին թշնամին մի շարք ագրեսիաներ ձեռնարկեց սահմաններին, ինչն ավելի խեղճացրեց խայտառակ պարտության խորհրդանիշ անձին: Ու այդ տարվանից սկսվեց նախկին սկզբունքներից ու պատկերացումներից նահանջը, ինչը կատարվեց շատ արագ ու արդեն հոկտեմբերին Եվրամիության հովանու ներքո Պրահայում առաջին անգամ բարձրաձայնվեց հայրենիքի նկատմամբ դավաճանության բանաձեւը: Այն ուներ այսպիսի ձեւակերպում՝ Արցախն ադրբեջանական տարածք է, ինչը շարունակվում է մինչեւ այս օրերը: Ու հայրենիքին այդքան արհավիրքներ բերած անձն առանց դույզն իսկ ամաչելու՝ խոսում է առաջնորդությունից: Խոսում է այն մասին, որ «գործել է կանխորոշված տրամաբանությունից դուրս եւ երկիրը կարողացել է հասցնել խաղաղ նավահանգստի»: Սակայն իրականում երկիրը հասցրել է այնպիսի հանգրվանի, որտեղ պատերազմն ու խաղաղությունը, իր ասելով, կարող են փոփոխվել մեկ անձի լինել-չլինելով: Չնայած եթե երկիրն արդեն հասցվել է խաղաղ նավահանգիստ, ապա տրամաբանորեն չպետք է նշանակություն ունենա, թե ով է ղեկավարում այն, եթե, իհարկե, հաջորդը չլինի իրենից ավելի ոչ ադեկվատ: Բայց չեմ կարծում, թե բնության մեջ կարող է լինել պետության այնպիսի ղեկավար, որ ավելի անադեկվատ լինի, քան ինքն է:

ՀԳ. *Քիչ էր մնում մոռանայի «Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացու անձնագրի» քարոզչական բուկլետի մասին, որ տպագրվել էր իր օրոք, ու դրանում ներառված էր, մինչեւ 2020 թվականի խայտառակ պարտությունը, Հայաստան+Արցախ միասնական քարտեզը: Թե ինչպես է դա համապատասխանում «կանխորոշված տրամաբանությունից դուրս գործելուն»՝ չի կարող պատասխանել նույնիսկ իր նման մանիպուլյատորը:*

ՀԳ 2. *Պարտության խորհրդանիշ անձի շրջապատում երկար մտածել են, թե ինչով է հնարավոր փոխարինել այդ բնորոշումը: Ու, պատկերացրեք, գտել են՝ խաղաղության խորհրդանիշ: Ընդհանուր առմամբ, համաձայն եմ, բայց շատ կարեւոր ճշգրտումով՝ կապիտուլյացիոն խաղաղության խորհրդանիշ: Թե ինչու առաջարկվեց նման ճշգրտումը՝ բացատրեմ. 88 տարի առաջ մեկ ուրիշ երկրի վարչապետն իր մայրաքաղաքի օդանավակայանում ինչ-որ թղթի կտոր էր թափահարում՝ ասելով, թե խաղաղություն է բերել: Շատ արագ պարզվեց, թե ինչպիսի բնույթ ուներ այն: Հիշեցնեմ. նույն այդ մայրաքաղաքի՝ 57 գիշեր անընդմեջ ռմբահարումների բնույթ:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՄԱՐԴ



ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԱՅԳԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՏԸ ՎՆԱՍԱԿԱՐ ԹԱՓՈՆՆԵՐ ԵՆ ԼՅՎՈՒՄ, ԲԱՅՑ ՀԱՄԱՅՆՔԸ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՉԻ ՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերյանի տարածաշրջանի՝ Դեբեդի հովտի բնակավայրերում զարգացած է պտղաբուծությունը, խորհրդային շրջանում՝ հատկապես դեղձի, վերջին տարիներին՝ կորոլյոկի մշակությունը: Լոռու մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները տասնամյակներ իրենց վնասակար թափոնները լցնում են Դեբեդ: Դեբեդի հովտի այգիները ոռոգվում են Դեբեդ գետի ջրերով, Լոռու մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունների գործունեության հետեւանքով գետը հագեցած է ծանր մետաղներով: Դեբեդի աղտոտված ջրով այգիները ոռոգելուց հետո ծառերի բնի շուրջ սպիտակ շերտ է նստում՝ կարծես ցեմենտով ամրանում են, եւ շատ պտղատու այգիներ՝ չորանում: Ծանր, քաղցկեղածին մետաղները ոռոգվող ջրի միջոցով անցնում են աճեցված մրգին: Նոյեմբերյանի տարածաշրջանի՝ Դեբեդի հովտի բազմաթիվ բնակիչներ Դեբեդից նաեւ ձուկ են որսում: Ձկնորսները չգիտեն՝ Դեբեդի ձուկն առողջարմ է, թե վտանգավոր մարդկանց առողջության համար:

Բագրատաշեն գյուղի բնակիչ, փորձառու այգեգործ Արմո Գաբրիելյանը հայտնեց, որ մի քանի տարի առաջ Դեբեդի հովտի մի բնակիչ պարծեցել է Դեբեդի «Խրամուլի» ձկնատեսակի համով եւ Ռուսաստանում գտնվող իր բարեկամին ուղարկել է Դեբեդից բռնած «Խրամուլի»: Վերջինս այդ ձուկը տարել է լաբորատորիա, փորձաքննության ենթարկել եւ պարզել, որ ձկան մեջ կան ծանր մետաղներ, որոնք վնասակար են առողջությանը, այդ ձուկն ուտելու համար պիտանի չէ:

Լոռու մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունների կողմից Դեբեդ գետն աղտոտելու համար 2017 թվականին Տավուշի մարզի համայնքներին հատկացվել են գումարներ: Այն ժամանակ, իմ հարցմանն ի պատասխան, Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը 2017-ին Տավուշի մարզի Այրում համայնքին սուբվենցիա է տրամադրել՝ 2,9 միլիոն դրամի չափով, Նոյեմբերյան համայնքին տրվել է 18 միլիոն 32.4 հազար, Կողբին՝ 509.8 հազար դրամ:

Տեղեկատվական հարցմամբ դիմել եմ Տավուշի մարզպետարան, թե Լոռու մարզում պղնձի արդյունահանմամբ եւ մշակմամբ զբաղվող ընկերությունները, որպես բնությանը պատճառված վնաս, 2018 եւ 2019 թվականներին Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքներին որքան գումար են տրամադրել: Մարզպետարանից պատասխանել են, որ Լոռու մարզում պղնձի արդյունահանմամբ եւ մշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից, որպես բնությանը պատճառված վնաս, 2018 եւ 2019 թվականներին Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքներին գումար չի տրամադրվել: 2025թ. հունվարի 22-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին նոր հարցում եմ արել. «Նախկինում դուք հայտնել եք, որ Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների վնասակար ազդեցությանը ենթարկվող համայնքների ցանկի մեջ ընդգրկված է Նոյեմբերյան համայնքը (2024 թվականի համար): Սակայն 2024 թվականին Նոյեմբերյան համայնքին, բնությանը պատճառված վնասների համար գումարներ չեն փոխանցվել: 2025 թվականին այդ նպատակով Նոյեմբերյան համայնքին որքա՞ն գումար է տրվելու, այդ գումարը ե՞րբ, ի՞նչ մեխանիզմով է տրվելու»:

Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Լոռու մարզի հանքարդյունաբերության ձեռնարկության վնասակար ազդեցության նպատակով 2025թ. Նոյեմբերյան համայնքին տրվող գումարի չափի եւ տրման մեխանիզմի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար առաջարկում ենք դիմել Նոյեմբերյանի համայնքապետարան»: Նոյեմբերյանի համայնքապետարանից տեղեկացել եմ, որ 2025թ. Նոյեմբերյան համայնքին գումար չի տրվել: 2026թ. մարտի 12-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին հարցում եմ արել. «Լոռու մարզում պղնձի արդյունահանմամբ եւ մշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից բնությանը, Դեբեդ գետին պատճառված վնասի համար Նոյեմբերյան համայնքին, որպես ազդակիր համայնքի, ինչո՞ւ գումարներ չեն փոխանցվում»:

ՏԿԵ նախարարությունից հայտնել են. «Տեղեկացնում ենք, որ 2022 թվականի մարտի 4-ին ընդունված ՀՕ-52-Ն օրենքով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերում կատարված փոփոխությունների համաձայն՝ պետական բյուջեի ծախսերից համայնքների բյուջեներին նախատեսվել են անվերադարձ մասհանումներ: Դրանք ձեւավորվում են յուրաքանչյուր ռոյալթի վճարողի կողմից տվյալ հաշվետու տարում պետական բյուջե վճարված ռոյալթիի 2 տոկոսի չափով: Նշված օրենքի իմաստով՝ ազդակիր բնակավայր է համարվում համայնքի այն բնակավայրը, որը հարակից է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռոյալթի վճարող կազմակերպությանը լեռնահատկացման ակտով հատկացված տարածքին: Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ Նոյեմբերյան համայնքը, սույն օրենքի իմաստով, չի համարվում ազդակիր բնակավայր»: Նոյեմբերյան համայնքի պտղատու այգիները Լոռու մետաղական հանքերի կողքին չեն, սակայն հանքերի գործունեության հետեւանքով ծանր մետաղներով աղտոտված Դեբեդի ջրով ոռոգվելուց հետո չե՞ն կրում այդ հանքերի գործունեության բացասական հետեւանքները, վերոհիշյալ օրենքի մեջ որտե՞ղ է տրամաբանությունը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐԻՑ ՈՒԶՈՒՄ ԵՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՔԱՄՈՒՆ ՏԱՆ, ԱՎԱԶԻՆ ՈՒ ՋՐԻՆ ԽԱՌՆԵՆ՝ ԳՆԱ՞

Սեւանում ճեմուղի կառուցելու նպատակով օրեր առաջ տեղի ունեցավ եւս մեկ հանրային քննարկում: Հիշեցնենք, որ նախորդ հանրային քննարկման ժամանակ Քաղաշինկոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը լսեց տնտեսվարողների բողոքները եւ խոստացավ, որ ամեն բան կվերլուծեն ու արդեն նոր տարբերակով կներկայանան:

Հերթական փոփոխված նախագիծն է ներկայացրել Քաղշինկոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը. «Ինչպես գիտեք, ջրի մակարդակը պետք է մինչեւ 1903,5 մ նիշը բարձրանա, որպեսզի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանվի, եւ ճահճացման գործընթացն ավարտվի: Գիտահետազոտական հիմքերի վրա՝ 1905 նիշը սահմանվել է այն նիշը, որից վերեւ կապիտալ կառուցապատում կարող են իրականացնել: Այդ նիշից ցածր կարող ենք իրականացնել ժամանակավոր, թեթեւ կոնստրուկցիաներով կառույցներ, որոնք աստիճանաբար կապամոնտաժվեն եւ կբարձրացվեն՝ ըստ ջրի բարձրացման նիշի: Եթե կառուցապատումը 1905 նիշից վերեւ է թույլատրվում, դրանից ներքեւ ամեն ինչ պետք է մաքրվի, առանց ժամկետների: Սա հնարավորություն է տնտեսվարողներին, գոնե մինչեւ այդ նիշին հասնելը, գործունեություն ծավալել եւ ունենալ ենթակառուցվածք, որը բարեկարգ է, որը բարձրացնում է գրավչությունը, որը հնարավորություն է տալիս իր հարակից տարածքներում շարժական, ոչ հիմնական կառույցներով ստեղծել ավելի բարենպաստ, ավելի գրավիչ ենթակառուցվածք եւ որը կմեծացնի մարդկային հոսքերը եւ հնարավորությունները՝ եկամուտ ստանալու այն տարածքներից, որոնք ավելի վատ պայմաններում են: Ունենք ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի սահմանումը՝ ճեմուղու վերաբերյալ, որ այն դասակարգում է տրանսպորտային ենթակառուցվածքների շարքին, նախատեսված է հետիոտնի եւ հեծանիվների օգտագործման համար: Իսկ ճեմուղու ծածկույթը նախատեսված է այնպես, որ արտակարգ իրավիճակներում հնարավորություն ունենք ոչ թե երթեւեկություն կազմակերպելու, այլ առաջին օգնություն ցուցաբերելու համար, որպեսզի շտապօգնության մեքենա մոտենա, եթե նման անհրաժեշտություն առաջանա: Նախագիծը վերադարձրինք նախագծող կազմակերպությանը՝ առաջարկելով գտնել բնապահպանական առումով ավելի ինտեգրված մոտեցում: Առաջարկվել է գեոցանցի հիմքի վրա առանց բետոնի օգտագործման: Գեոցանցի առավելությունն այն է, որ աստիճանական ջրի մակարդակի դեպքում, երբ կհասնի համապատասխան նիշին, հնարավորություն ունենալ ապամոնտաժել եւ ավելի բարձր նիշի վրա տեղափոխել»:

Տնտեսվարողներից **Նելսոն Սարգսյանն** ասաց. «68 տարեկան մարդ եմ, գիտեմ, որ ամեն տարի լիճը կանաչում է, դա նոր չէ: Էդ նախագծի փոխարեն Սեւանա լճի մասին թող մտածեն, մտածեն այն մասին, որ կոյուղաջրերը լցվում են լիճ: Մաքրման կայաններ կառուցելու հարց ենք բարձրացնում, ասում են՝ ֆինանս չունենք: Ո՞վ է ֆինանսավորում ճեմուղու նախագիծը, ֆինանսավորումն այդ ուղղությամբ թող ներդնեն, առանց լիճը մաքրելու ճեմուղի՞ եք կառուցում»:

«Եթե ճեմուղին կառուցեն, հարյուրավոր ծառեր են կտրվելու: Բնապահպանության նախարարությունն իր անվանը համահունչ՝ պետք է բնության պահպանություն կատարի, ոչ թե ծառեր կտրի: Հետաքրքիր է՝ որքա՞ն է նախագծի արժեքը: Ենթադրենք, մի անգամ իքս գումար ծախսվեց, ճեմուղին կառուցվեց: Քաղշինկոմիտեի նախագահի տեղակալն ասում է, որ ջուրը բարձրանա, ճեմուղին հետ տանենք: Սա ի՞նչ է նշանակում, որ կրկին փող են ծախսելու: Միջոցները քամո՞ւն տանք, ավազին ու ջրին խառնենք՝ գնա՞: Նախագծողները Սեւանով հետաքրքրվում են տարին մեկ կամ երկու անգամ, Սեւանը հիշում են միայն ամառվա շոգ եղանակին, մյուս ամիսներին Սեւանով հետաքրքրվող չկա՞մ»,- իր մտահոգությունը հայտնեց տնտեսվարող **Գրիշա Հարությունյանը**:

Սեւակ Ստեփանյանն էլ ասաց, որ սկզբից էլ դեմ են եղել ճեմուղու նախագծին, մինչեւ վերջ էլ դեմ կլինեն. «Լավ բան են ուզում անել, թող Սեւան քաղաքի զբոսայգին սարքեն, թող նախագիծ տանեն՝ 2 կմ Լճաշենից մինչեւ հանրային լողափ անեն ճեմուղի, մնացած 800 մետրն էլ Հայրիվանքի տարածքում անեն: Ի՞նչ են կպել «Հարսնաքարից» մինչեւ թերակղզի հատվածին վրա: Ուզում են զարգացնել, խնդրեմ՝ թող այդ հատվածները զարգացնեն, այդ մասն էլ Սեւանի մի հատված է»:

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հայտարարել էր, որ դատախազությունում մեկնարկել են Սեւանա լճի ափամերձ տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու աշխատանքները: Դատախազության կողմից մի շարք գույքերի վերաբերյալ հայցեր են ներկայացվել դատարան, որոնց թվում էին նաեւ «Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրը (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջները (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե):

Սեւանցիները մտահոգություն ունեն, որ «Հարսնաքար» հյուրանոցն անմիջական կապ ունի ճեմուղու կառուցման հետ, քանի որ ճեմուղին կառուցելու են «Հարսնաքար» հանգստի գոտուց մինչեւ Սեւանի թերակղզի ընկած հատվածը, ուստի չի բացառվում, որ այն տարածքները, որոնք նախագծի տակ են հայտնվել, կքանդվեն, իսկ ճեմուղին կառուցելուց հետո այդ ամենի տերն ու տիրականը կդառնա իշխանության սրտի հերթական օլիգարխը: Ինչպես դա արվեց, օրինակ, Ծաղկաձորում գտնվող «Գոլդեն փելես» հյուրանոցային համալիրի դեպքում: Գնորդն ալյուրի, ձվի արտադրությամբ, շինանյութերի մեծածախ առեւտրով եւ բեռնափոխադրումներով զբաղվող «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ընկերությունն էր՝ իշխանության սրտի օլիգարխ Նարեկ Նալբանդյանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Նեմեսիս». Ագաթա Քրիստիի ամենահայտնի վեպի էկրանավորումը

Միլիոնատեր Ջեյսոն Ռեյֆիլը տարօրինակ հանձնարարական է տալիս միսս Մարփլին՝ հետաքննել հանցագործություն՝ ձեռքի տակ չունենալով եւ ոչ մի հանցանշան, նույնիսկ չունենալով գործի հստակ նկարագրությունը: Ռեյֆիլը վստահ է, որ միսս Մարփլը կկարողանա այդ հանձնարարականը կատարել, քանի որ սկզբունքային է, ունի երկաթյա տրամաբանություն, սկսած գործը հասցնում է ավարտին եւ՝ միշտ հաջողությամբ: Նա անգլիացի տարեց կնոջը, որը հայտնի է հանցագործությունների իր փայլուն բացահայտումներով, նմանեցնում է Նեմեսիս աստվածուհուն: Ահա՝ այսպես է սկսվում անգլիացի հայտնի գրող, համաշխարհային գրականության ոլորտում «դետեկտիվի թագուհի» համարվող Ագաթա Քրիստիի «Նեմեսիս» վեպը:

Վեպը հրատարակվել է 1971 թվականին: Այն համարվում է Ագաթա Քրիստիի ուշ շրջանի ամենահետաքրքիր գործերից մեկը, նաեւ նրա հերոսներից միսս Մարփլի մասնակցությամբ վերջին վեպերից է: Դետեկտիվ ինտրիգն այստեղ զուգորդված է բարոյական հատուցման, հիշողության, անցյալում կատարված եւ գաղտնի պահված հանցագործությունների թեմաների հետ: Ժանրային առումով դասակարգվում է «պոստ-ֆակտում» դետեկտիվների շարքին, որտեղ ճշմարտությունը բացահայտվում է արդեն ժամանակ անց: Այս տեսակի դետեկտիվներում հանցագործությունը ոչ թե կատարվում է սկզբում, այլ պետք է բացահայտվի հիշողության: «Նեմեսիսն» էկրանավորվել է մի քանի անգամ: Առաջին հեռուստատեսային ցուցադրությունը եղել է 1987 թվականին, BBC-ի կողմից՝ որպես երկմասանի ֆիլմ՝ ընդհանուր «Միսս Մարփլի» մասին պատմող սերիալի բաղկացուցիչ: Առաջին էկրանավորման տեւողությունը կազմել է 100 րոպե: Ռեժիսորը Դեւիդ Թաքերն է, սցենարը գրել է Տ. Ռ. Բոուենը: Գլխավոր դերում հանդես է եկել Ջոան Հիքսոնը: Ի դեպ, այս դերասանուհու կերտած միսս Մարփլի կերպարը համարվում է գրական հերոսի ամենահարազատ կերպավորումը: Հայտնի է, որ Ագաթա Քրիստին անձամբ է հավանություն տվել, որ Հիքսոնը հանդես գա այդ դերում: Սա բարձրացնում է կարգավիճակն ու այս էկրանավորումը դարձնում «էտալոնային» կինոյի ոլորտում: Սյուժեն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է վեպին: Առհասարակ, այս էկրանավորումը շատ հարազատ է գրական գործին, ինչը հատուկ էր 80-ականների բրիտանական գրական գործերի կինոադապտացիաներին:

Հաջորդ կարեւոր էկրանավորումը կատարվել է ITV-ի կողմից՝ 2007-2009 թթ.՝ Մարփլին նվիրված սերիալային շարքում: Գլխավոր դերում այս անգամ հանդես է եկել Ջերալդին Մաքյուենը: Սա ավելի ազատ մեկնաբանություն է: Ու դա, կարելի է ասել, լավ է, որովհետեւ հանդիսատեսն ունի ընտրելու հնարավորություն՝ դիտել վեպին հարազատ էկրանավորումը, թե՝ ավելի ազատ կինոմեկնաբանությունը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱԽԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ստեր իրականությունը վաղուց Թումանյանի «Չարի վերջն» է հիշեցնում: Միայն սյուժեն խճողել է Նիկոլ վարչապետը: Այսօր խեղճ կկվից ձագեր են ուզում միանգամից երկու եղբայր աղվես՝ Նիկոլ, Ալիեւ: Միասին են «հաթաթա» տալիս՝ «հրեն, կացինը սրած, էլի տվեք...»: Տվել ենք՝ Արցախ, Սոթք, Ջերմուկ, Իշխանասար, Կիրանց, Սյունիք... Չեն կշտանում: Էլի ու էլի են ուզում: Իսկ մեզ վերջին ձագուկն է մնացել: Հոգատար մի իմաստուն չկա, որ ասի՝ ինչ կացին, ով է կտրելու ծառը...

Թվում է՝ ճակատագրական այս պահին ընդդիմությունը պիտի վճռական հայտարարի՝ «սարն ամենքինս է՝ հավասար»: Բայց՝ ոչ: Կարեւոր հարցերով է զբաղված՝ վերլուծում, քննարկում է Նիկոլի ամենօրյա ինտրիգները: Պետք է ասել, որ երբեմն հաջողվում է սատիրիկ պատասխաններ հնչեցնել: Զորօրինակ, «Եթե ինձ չընտրեք, պատերազմ կլինի» թեզին հակադրելով «Ալիեւի հետ բանակցել, պայմանավորվե՞լ ես» հակաթեզը: Եվ դա բավարար է համարվում: Բարեկամներ, Նիկոլը գիտի՝ ինչ է անում, ինչու է անում, դուք նրանից սարեր-ձորերով ետ եք մնում: Նա կարող է կուկուռուզ կրծել, լավաշ հոշոտել, բեմական խնձոր «ոչնչացնել», անգամ «սեմուշկա» չրթել, ծաղրածուի կերպարի մեջ մտնել: Մինչ դուք փորձում եք հասկանալ՝ «էս ինչ է անում», ամեն ինչ անում է մասսայի ուշադրության կենտրոնում լինելու համար: Նա դրանով է օրակարգ ձեւավորում: Նախ՝ զբաղեցնել մարդկանց ուշադրությունը, ապա՝ ժամանակ շահել եւ վերջում՝ նետել թեմա, որը կգերիշխի բոլոր քննարկումներում: Հիմա, այս դեռ չսկսված ընտրապայքարում առաջատարն ով է: Իհարկե՝ ՔՊ-ն: Անգրագետ Նիկոլը կարողանում է խայծ նետել: Հենց ուզում եք բռնել, «պլստում» է, մի ուրիշ տեղ դուրս գալիս:

Դուք, հարգելի ընդդիմադիրներ, գնում եք միայն նրա ետեւից: Մինչ դուք փորձում եք «վնասազերծել» նրա խոսքերը, նա արդեն հաջորդ քայլն է անում: Եվ մերկ «ռումբը». «Եթե ինձ չընտրեք, պատերազմ կլինի»: Սա արդեն ձեւավորված քաղաքական լեզու է, որը կրկնվում է տարիներ շարունակ՝ եթե սա չլինի, կլինի պատերազմ, եթե դա չանենք, կլինի պատերազմ, եթե մենք չլինենք, կլինի պատերազմ: Սա համակարգ է, որի հիմքում ընկած է մեկ բան՝ վախը: Մինչ դուք արձագանքում եք, նա վախի դաշտ է ձեւավորում, եւ դա դառնում է կառավարման գործիք: Նահանջի, զիջելու հակված հասարակությունն ընտրում է խելամտությունը, անվտանգությունը: Վերջին տարիների իրադարձությունները հուշում են՝ այդ վախը բազմիցս օգտագործվել է կոնկրետ որոշումներ հիմնավորելու համար՝ տարածքների զիջումներ, հետընթաց, «ավելի վատից խուսափելու» անվան տակ արված քայլեր: Հիմա նույն բանաձեւն է՝ ընտրությունների շեմին: Ասենք թե, նա ասի՝ վերջ, էլ Հայաստանի Հանրապետություն չկա: Ինչ ենք անելու: Համոզված եմ՝ ոչինչ: Իսկ ինչ արեցիք, երբ հայտարարեց՝ Արցախ չկա: Որովհետեւ, երբ հասարակությունը երկար ապրում է վախի մեջ, ինչ-որ պահից դադարում է դիմադրել:

Անհոգ եք, մեր սիրելի ընդդիմադիրներ: Առայժմ 20 կուսակցություն եք բերել դաշտ: 20 տարբեր ձայն: Ինչ է սա՝ միավորում, թե՞ փոշիացում: Մինչդեռ բոլորիս խնդիրը պետք է մեկը լինի՝ իշխանությունից զրկել գործող ուժին: Ոչ թե իրար հետ մրցել: Հետո՝ գնացեք գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք, ինչպես նիկոլականներն են անում, ծայրամասեր լուրերն ուշ են հասնում, միայն Հ1-ի հույսին են, մարդկանց պարզ լեզվով բացատրեք այս ամենը: Ասեք՝ Նիկոլի ընտրվելու դեպքում ամենօրյա կորուստները շարունակվելու են՝ հող, արժանապատվություն, սահմանադրություն, անգամ՝ պետականություն եւ դրան վրադիր՝ ավելի ռեալ է դառնալու պատերազմի վտանգը: Պատերազմից չեն վախենում, պատերազմին պատրաստվում են, իսկ Փաշինյանը չի պատրաստվում պատերազմին պատրաստվել. նրա օրակարգում չկան բանակն ու պաշտպանունակությունն ամրացնելը, հասարակության դիմադրողականությունն ու դիմակայունությունը բարձրացնելը: Նա սեփական ժողովրդին վախեցնելով՝ պետությունն է կործանելու. այ, սա է պետք բացատրել մարդկանց:

Հիմա մեզ հենց այդ խոսքն ասող է պետք: Այն առաջնորդը, որը չի ասի՝ «վախեցեք թշնամուց», այլ կասի՝ «մենք չենք վախենում թշնամուց, որովհետեւ գիտենք ինչպես պաշտպանել մեր երկիրը»: Ով չի պարտադրի. «Ես կամ կործանում», այլ կվերացնի այդ կեղծ թեզը: Որովհետեւ «կամ ես, կամ պատերազմ» բանաձեւը քաղաքական դիրքորոշում չէ, խաբեություն է, մանիպուլյացիա: Դա հաստատ պատերազմ է: Եթե մենք շարունակենք ընդունել նրա պարտադրած խաղի կանոնները, պատերազմի վտանգը երբեք չի հեռանա մեր երկնակամարից:



Նյութերը՝ Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԻ

ՈՎ Է ԿԱՅԱՑՐԵԼ ՎԱՆԱՁՈՐԻ ԾԱՌԵՐԻ «ԴԱՏԱՎՃԻՌԸ»

Վանաձորում երեկ առավոտից ծառերի սպանդ էր գնում՝ ականջ ծակող նույն պատճառաբանություններով. «հիվանդ են», «բնակիչները բողոքել են», «մասնագետներն ուսումնասիրել են, որոշում է կայացվել»: Այսպես է պարզաբանում իրավիճակը համայնքապետարանի լրատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը: Բայց իրականությունը, ինչպես հաճախ է լինում, շատ ավելի անհարմար է՝ պաշտոնական ձեւակերպումների համար:

Մի խումբ քաղաքացիներով, կանգնած Տանձուտ գետի մեծաթռիչք կամրջի վրա, ականատես դարձանք մի տեսարանի, որը, ցավոք, սովորական է դարձել: Երիտասարդը՝ սղոցը ձեռքին, հերթով տապալում էր հաստաբուն, սաղարթախիտ ծառերը: Այդ պահին արդեն չորսն էր հոշոտվել: Ինչո՞ւ, ո՞ւմ էին խանգարում այդ ծառերը: Մի՞թե դրանք չեն մաքրում օդը, կլանում փոշին, օգտակար չեն բնակիչների եւ հենց կտրելու թույլտվություն տվողների համար:

Քաղաքապետարան ահազանգելուց հետո լսեցինք վերը հիշատակած պատասխանները: Ցանկացանք անձամբ ներկայանալ, տեսնել մասնագետների եզրակացությունները, թույլտվությունները: Պատասխանը՝ «գրավոր դիմեք»: Մինչ դիմումը կգրվի, տեղ կհասնի, կքննարկվի, պատասխան կձեւակերպվի ու ետ կուղարկվի՝ օրեր կանցնեն, եւ այդ ընթացքում քանի՞ ծառ էլի կհոշոտվի:

Միեւնույն ժամանակ գետի հունում աշխատում էր հզոր էքսկավատոր: Իհարկե, գետի հունը մաքրելը կարեւոր է, բայց ինչո՞ւ հիմա, երբ Տանձուտն ու Վանաձոր գետն արդեն վարարել են, ջրի հոսքը զգալիորեն ուժեղացել է, արեւը տաքացնում է, սարերում հալոցքը թափ է հավաքում: Բացառվա՞ծ է հեղեղի վտանգը: Ո՞վ է գնահատել ռիսկերը, ո՞վ է նման պահին նման աշխատանք հրահանգել: Եվ ամենակարեւորը՝ էքսկավատորն էլ իր հերթին է ծառեր տապալում՝ լրացնելով սղոցի «թերությունը»:

Վանաձորում սա այլեւս առանձին դեպք չէ, այլ՝ օրինաչափություն: Քաղաքացիները գրեթե ամեն օր տեսնում են «կանաչի հանդեպ սիրո» նման դրսեւորումներ: Մի օր անհետանում են մայթեզրի ծառերը, մյուս օրը՝ հերթական պուրակի եղեւնիները: Հետո տարածքը լցվում է շինանյութով եւ վերածվում շինհրապարակի: Մենք արդեն սա տեսել ենք, երբ տարիներ առաջ քաղաքի կենտրոնում՝ Հայքի հրապարակին կից, մեկ օրում վերացավ եղեւնիների հիասքանչ պուրակը: Փրթեցին շուք տվող ծառերը, եւ նրանց տեղում հայտնվեցին քարաշեն կառույցներ՝ բանկ, առեւտրի կենտրոններ: Այն ժամանակ խոստացան՝ «կտրված մեկ ծառի փոխարեն երկու ծառ կտնկենք»:

Դեմագոգիայի դասական օրինակ: Որտե՞ղ պիտի տնկեին: Տանիքո՞ւմ: Նկուղո՞ւմ: Բոլորիս պարզ է՝ ծառերը բետոնի վրա չեն աճում:

Ավելի ցավալին այն է, որ այս ամենը պատահական չէ: Քաղաքաշինական մտածողությունը հաճախ չի անցնում խանութ-դուքաններից, առեւտրի եւ սպասարկման օբյեկտներից այն կողմ: Արտադրություն ստեղծելը դժվար է, գործարան կառուցելը՝ բարդ, իսկ կանաչ տարածքը վերացնելը՝ հեշտ: Մնում է միայն «հիվանդության» կամ մի «բողոքի» պատրվակով՝ անհրաժեշտ փաստաթուղթ ձեւակերպել, օրինականություն հագցնել արդեն կայացված որոշմանը եւ ծառերը ոչնչացնել: Արդյունքում քաղաքը կորցնում է իր կենսական տարածքը՝ օդը, հովը, ստվերը, բնական միջավայրը: Քաղաքացիների շնչելու իրավունքը դառնում է երկրորդական, առողջությունը՝ վտանգված:

Եվ այս ամենի ֆոնին հարցը մնում է բաց՝ ովքե՞ր են որոշում, թե որ ծառը պետք է ապրի, եւ որը՝ ոչ: Եվ այդ որոշումները բխում են հանրային շահի՞ց, թե՞ բոլորովին այլ հաշվարկներից: Երեւանում մեկնարկած ծառերի սպանդը մարզեր էլ հասավ, փաստորեն:

ՊԱՏԵՐԱԶՄ ԼԻՆԻ, ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵԶ ՏԵՍԵԼ ԵՆՔ

Շաբե ԱՎՈՅԱՆ

L'État, c'est moi. Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին է վերագրվում «Պետությունը ես եմ» միտքը, թեեւ, ասենք, որ պատմաբանները վիճում են՝ նա իրո՞ք ասել է սա, թե՞ ուղղակի այդպես են ժամանակակիցները բնորոշել նրա բացարձակ միապետական իշխանությունը: Բայց ասած կլինի, նրա կյանքն ու գործունեությունն ապացուցում են, որ հաստատ համարել է, թե պետությունն ինքն է: Ինչեւէ:

Նմանություններ փնտրել պետք չէ: Ֆրանսիացի ազնվազարմ միապետին գավառագիտունների հետ համեմատելու համար չէ, որ այս ամենը հիշատակում ենք, ուղղակի ուզում ենք ասել, որ եթե Լուի 14-րդն ասել է կամ չի ասել, թե պետությունն ինքն է, գավառամիտ ղեկավարներն ասել են, ու լսել ենք: Օրինակ, Նիկոլ Փաշինյանը բառացիորեն ասաց՝ կառավարությունը ես եմ, ու դա չարժանացավ մեծ արձագանքի, երեւի պատճառն այն է, որ այս մարդու ասածները պատմության համար նույնքան արժեքավոր չեն, ինչպես Լուի միապետի անգամ չասածները:

Եվ այսպես, ո՞վ կարող էր ենթադրել, թե «վերջապես ժողովրդավարության դուռը բացած» Հայաստանում կլինի մի վարչապետ, որն ուղղակիորեն կասի՝ «կառավարությունը ես եմ»: Դա ամենեւին Լուի 14-րդի ասածի կրկնությունը կամ պարոդիան չէ, դա կատակ չէ եւ ոչ էլ փոխաբերություն: Դա ինքնաբուխ եւ անակնկալ խոստովանություն է, որը նույն պահին իսկ զարմացրեց թե՛ իրեն՝ ասողին, թե՛ իրեն լսող անգամ կողմնակիցներին: Սա ապացույց է, որ իրենց խոստացած ժողովրդավարությունը չստացվեց, եղավ հակառակը՝ ստացվեց միապետություն: Կառավարությունը ես եմ, ես եմ կաթողիկոսը, ես եմ միակը, ով կարող է հաստատել խաղաղություն հայկական լեռնաշխարհում ու պահպանել այն, ես միակ իմաստունն եմ, որ հաստատ գիտի՝ ինչ ասել ու ինչ գիծ պահել, որպեսզի խաղաղություն լինի. հիմա էլ ասում է կառավարության մարմնացում վարչապետը: Նա ոչ միայն կառավարությունն է, այլեւ հայ ժողովրդի նահապետը՝ ընդմիշտ վարչապետը, նոր միապետը, ալֆան եւ օմեգան, առանց որի հայության գոյությունը ոչ թե հարցականի տակ է, այլեւ դատապարտված է վերջնական ոչնչացման: Նա իշխանության եկավ՝ առաջին անգամ ասելով. «Կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա», հիմա ասում է, փաստորեն՝ կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստան չի լինի:

Եվ եթե սահմանադրական մեծամասնություն չստանանք, սեպտեմբերին պատերազմ կլինի՝ չարագուժում է Փաշինյանը՝ նշելով ստույգ ժամկետ եւ աղետաբեր ելք: Սա սեփական ժողովրդի նկատմամբ աննախադեպ եւ լայնածավալ ահաբեկություն է ու շանտաժ: Պատերազմ ոչ ոք չի ուզում: Ընտրապայքարի պատրաստվող քաղաքական ուժերից որեւէ մեկը չի ինքնահռչակվել որպես պատերազմի կողմնակից: Մարդիկ խոսում են բանակցային արդյունավետ գործընթաց սկսելու, հայկական շահը տարբեր ատյաններում ներկայացնելու, դաշնակիցների հետ հարաբերությունների հստակեցման եւ ամրապնդման անհրաժեշտության մասին: Որտե՞ղ է տեսնում պատերազմի վտանգը Փաշինյանը: Այո, 7 տարում հայությունը տեսավ պատերազմ, կորցրեց հայրենիքի մի մասը, կորցրեց մի սերունդ երիտասարդություն, եւ այդ աղետներից «օգուտ» քաղեց միայն 7 տարի առաջին դասարանում մնացած վարչապետը: Նա, իր կարծիքով, խաղաղության միակ մունետիկն է, միակը՝ երաշխավորն ու դրոշակակիրը, եւ, փաստորեն, հայ ժողովուրդը դատապարտված է իր գոյության ամբողջ ընթացքում միայն նրան ունենալ որպես վարչապետ:

Արդյոք նա անմա՞հ է եւ կարո՞ղ է ընդմիշտ լինել՝ խաղաղության իր հրաշալի կոնցեպտը պաշտպանելու համար: Գուցե նրան ընտրենք միանգամից 100 տարո՞վ, որ զերծ լինենք պատերազմի վտանգից: Բայց այդպես չէ, իրենց ընտրողների թիվն այս խոսույթով չի ավելանալու՝ նվազելու է: Շանտաժի լեզուն համոզելու ամենավատ տարբերակն է, դա առաջացնում է մերժում, քանի որ բռնություն է եւ պարտադրանք: Շանտաժին դիմում են վերջին հերթին, երբ բոլոր տարբերակները՝ սրտիկները, բարի խոստումները, նվագել-երգել-պարելը սպառվել են, ցանկալի օգուտը չեն տվել, լավ չեն համոզել, ու ժամանակն է՝ կրակել վերջին փամփուշտը՝ դիմել շանտաժի ու ստիպել, որ հիմա էլ իրենց ընտրեն ոչ թե՝ որովհետեւ իրենք լավն են, այլ՝ որովհետեւ իրենք են մեր գոյության միակ երաշխիքը, եւ ուրիշ ճար չկա...

Սա անգամ որպես շանտաժ լավ չի համոզում՝ 2 պատճառով: Նախ ցույց է տալիս, որ իրենք ոչ միայն ժողովրդավարություն, այլեւ կայուն խաղաղություն չեն հաստատել, որի վրա հայ մարդն արդեն կարող է վստահ լինել ու գոհ մնալ իրենցից, որ պատերազմի դուռը, թեկուզ ծանր վնասով, փակվեց վերջապես: Երկրորդ. եթե պատերազմի հավանականությունը մնում է, եւ իրենց հաստատած խաղաղությունն այդքան փխրուն է, ուրեմն՝ առավել եւս այս իշխանությունն օր առաջ պետք է հեռանա, քանի որ մենք տեսել ենք, թե ինչպես են նրանք պատերազմ վարում, տեսել ենք, թե ինչպես են ձախողում պատերազմը եւ պարտությունից հետո թշնամուց նեղողություն խնդրում ու շնորհակալություն հայտնում, իսկ մահ ու ավեր տեսած հայրենակցի վրա մատ թափ տալիս ու «փախած» անվանում: Պատերազմ լինի, թե խաղաղություն՝ երկիր կառավարելու նրանց հունարը մենք տեսել ենք:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 25.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԿԱԹԵ ՁՈՂՈՎ ԾԵԾ, ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՀ. ՏՆՕՐԵՆՆ ԱՆԳԱՄ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՍՏԱՑԵԼ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցը հերթական սկանդալի կիզակետում է հայտնվել: Երեք տարի առաջ՝ 2023-ին, նույն դպրոցում՝ դաժան ծեծի հետեւանքով մահացել էր դպրոցի 15-ամյա աշակերտը: Շաբաթներ առաջ էլ մեկ այլ աշակերտ երկաթե ձողով դաժան ծեծի էր ենթարկվել: Դպրոցից մեզ պատմեցին, որ ծեծի արդյունքում մահացած տղայի համար որեւէ մեկը մինչ օրս պատասխան չի տվել, քանի որ կասկածյալներից մեկը դպրոցի փոխտնօրենի որդին է, մյուսը՝ Էջմիածնում հայտնի բժիշկներից մեկի որդին: Մահացած աշակերտի հորաքույրը՝ Կարմեն Հովհաննիսյանը, պնդում է՝ եղբորորդին պատմել է, որ դպրոցում իրեն ծեծել են «արա» բառի համար: Հաջորդ օրը ոտքը գետնին չի կարողացել դնել, նաեւ միջնամատն է երկու օրվա ընթացքում այտուցվել: Հետո գնացել է գյուղ՝ հոր ֆերմա ու տատիկի տուն, թույլ է զգացել, պառկել է, հայրը նախ Էջմիածնի, հետո Երեւան՝ հիվանդանոց է տարել:

Հորաքույրը պնդում է՝ դպրոցը թաքցնում է, որ եղբորորդուն ծեծել են Էջմիածնի բժիշկներից մեկի ու դպրոցի փոխտնօրենի տղաները: Պահանջում է, որ իրավապահներն արդար քննություն իրականացնեն ու պատժեն մեղավորներին: Իսկ ինչո՞ւ է պատանու հայրը հիվանդանոցում ու ոստիկանությունում հայտարարել, թե որդին ծեծի չի ենթարկվել, այլ հեծանիվից է ընկել, հորաքույրն ասում է՝ դա մահացած զարմիկի խնդրանքն է եղել: Ի դեպ, դպրոցի տնօրեն Գայանե Սաֆարյանը դեռ 2023-ին «Հրապարակին» հարցազրույց էր տվել եւ ամեն գնով փորձել արդարացնել մեղավորներին: Մեզ պատմեցին, որ տիկին Սաֆարյանը երդվյալ ՔՊ-ական է, դպրոցում 22ուկներ են պտտվում, որ մոտ հարաբերություններ ունի ՔՊ-ական վերնախավի հետ, եւ հենց այդ պատճառով արդեն երկրորդ անգամ իր ղեկավարած դպրոցը հայտնվում է նման ողբերգական սկանդալների կիզակետում, սակայն վերջինս անգամ մի ձեւական նկատողություն չի ստանում: Մենք դեռ շաբաթներ առաջ էինք փորձել ԿԳՄՍ նախարարությունից պարզել, թե ինչու դպրոցի տնօրենը նկատողություն անգամ չի ստացել, սակայն նախարարությունից մեզ հետ զրույցում ասացին, որ հարցերին չեն կարող պատասխանել:

Մեր զրուցակիցը, որի երեխան սովորում է այս դպրոցում, պատմում է, որ տնօրենը դպրոցը քաոսի է վերածել եւ չի կարողանում կառավարել, արդյունքում՝ դպրոցն այնպիսի վիճակում է, որ ծնողները վախենում են երեխաներին դպրոց ուղարկել, քանի որ դպրոցում «բանդաներ» են գործում, իսկ տնօրենը ոչ մի քայլ չի ձեռնարկում՝ կարգուկանոն հաստատելու համար:

«Հրապարակը» նաեւ դիմեց Վաղարշապատի համայնքապետարանի կրթության բաժին, սակայն բաժնի ղեկավար **Լիլիթ Հակոբյանն** ասաց. «Մենք այդ դպրոցի հետ կապված որեւէ լիազորություն չունենք եւ ոչինչ անել չենք կարող: Մեր աշխատանքը վերաբերում է բացառապես ՀՈԱԿ-ներին, օրինակ՝ մանկապարտեզներ եւ այլն»: Փորձեցինք զրուցել նաեւ դպրոցի տնօրեն Գայանե Սաֆարյանի հետ՝ հասկանալու, թե ինչու են հատկապես իր ղեկավարած դպրոցում ծեծուջարդով աշակերտները հարցեր լուծում, սակայն նա հեռախոսը փոխանցեց նույն դպրոցի փոխտնօրեն **Արփինե Սաֆարյանին**: Փոխտնօրենը մեր այն հարցին, թե ինչպես է օրեր առաջ դաժան ծեծի ենթարկված աշակերտի վիճակը, խուսափողական տոնով ասաց. «Այդ երեխան դեպքի հաջորդ օրվանից արդեն եկել է դասի, այլ բան չեմ կարող ասել: Երեխան, կարեւորը՝ առողջ է, լավ ինքնազգացողությամբ դասի է գալիս»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am